ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1965 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ս. Ռ. ՎԵՐՅԱՆ

ՎԱՍԱԿ ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

...Այն հեքիաթները... տիրացուական աշխարհայացքով ...սովորեցրել ու թելադրել են դարերի ընթացքում... հայ կղերական պատմիչները...։ Նահապետական, պրիմիտիվ, կղերական պատմահայեցողությունը ոչ միայն անօգուտ ու անպտուղ է, այլև վնասակար...։

Ստեփան Շահումյան

(«Հոդվածներ և ճառեր», էջ 153..., Երևան, 1953 թ.)։

Այս աշխատությունը իմ մի վաղուցվա կարճ հոդվածի ընդլայնվածն ու խորացվածն է, որը ես կատարելու հույժ բարեբախտ առիթն ունեցա այստեղ՝ Սովետական Հայաստանում։

Այս հոդվածի տարողությունը սահմանափակ է—վեր հանել Վասակի այն գործերն ու վարմունքները, որոնք օգտակար էին Մաշտոցի անփոխարինելի հեռահաս գործին և մաշտոցակնիք հայ ժողովրդին. (ուստի միջամուխ չեմ լինելու զանազան վիճարկված խնդիրների, թե՝ Եղիշեն երբ ապրած է և գրած, Փարպեցի՞ն առաջ է թե Եղիշեն, ո՞վ մյուսից օգտված է, թե ոչ երկուսն էլ մի երրորդ աղբյուրից օգտված են. Եղիշե ականատե՞ս է թե ոչ, երկու կողմերը որքա՞ն զորք ունեին և այլն։ Այստեղ չկա նաև վասականպաստ ուսումնասիրողների մի քանի անընդունելի կարծիքների մասին)։

I

Հանրահայտ է, որ վերլուծելով երկու մամիկոնաշունչ հեղինակների պատմած դեպքերը. Վասակի մեջ արդեն դրական անձ են հայտնաբերել գլխավորաբար Ա. Մ. Գարագաշյանը («Քննական պատմ. հայոց» Դ, 111—212, Թիֆլիս. 1895), Ն. Ագոնցը («Марзпан Васак перед судом историков», 1904), Հրանդ Ք. Արմենը («Մարզպանը և սպարապետը», մասնավորաբար վերջին չորս գլուխները, 199—247, Լոս Անճելես, 1952, և «Քննադատները ջղայնացած են», Լ. Ա, 1952), և Ստ. Մալխասյանցը («Մատենագիտական դիտողություններ», 9-րդ գլուխ, «Եղիշե և Ղազար Փարպեցի», 130—157, Երևան, 1961)[1]։

---

1 Շահեկան կլիներ այստեղ մի քանի մեջբերումներ.— Որովհետև... Փարպեցին և Եղիշե մանավանդ... ի բարձրացուցանելն զմին, զմյուսն կիջեցուներն շարաշար անիրավ դատում մը տիրած է յաղագին ընդդեմ Վասակայ։ (Ա. Մ. Գարագաշյան, «Քնն. պատմ. Հայոց» Դ, 143)։

Դեռ շարունակվում է այն հնացած տեսակետը, որ... Եղիշեն փաթաթել է Վասակ մարզպանի անվանը. այսքան դարերում հանիրավի ամբաստանված Հայաստանի իշխանը դեռ չգտավ արդարացի քննություն և պատմական անաչառ վերլուծություն, պատվի վերականգնում։

Վասակ... ոչ թե ուրացյալ մարդ էր, դավաճան. այլ խելոք քաղաքագետ էր և ջերմեռանդ հավատի մեջ, և ավելի հայրենասեր, քանի որ հոգում էր բոլոր Հայաստանի փրկության համար...։ Վասակը չէ փոխում յուր հավատը. այս է վկայում... Ղ. Փարպեցին, նկարագրելով նրա կյանքի վերջին օրերը։ (Ստ. Մալխասյանց, «Մատենագիտ. դիտողություններ», 148—150)։

Վասակը՝ երկրի մարզպանը մեծամասնության կողմը կանգնեց և գործեց նրա կամքին համաձայն... Վասակի միջնորդության շնորհիվ Հայաստանը փրկվեց սոսկալի կոտորածից։... (Եղիշեի համեմատած) ավելի անաչառ Փարպեցին ոչ մի տեղ չի խոսում Վասակի ուրացման

Ես, հաճախ անկախաբար, հասած եմ միևնույն հետևություններին, թելադրված՝ միևնույն պատմված դեպքերից. բայց գլխավորաբար ջանացած եմ նոր ապացույցներ ճարել, և կամ նոր դատողություններով ու մեկնաբանություններով նոր լույս սփռել, վերականգնել փորձելով Վասակի չարաչար աղճատված դեմքի դրական գծերը, որոնք սակավ ու հասարակ չեն. ստորև կտեսնենք, որ նա ոչ միայն կարեկցելի է, ոչ միայն արդարանալի ու վերականգնելի, այլև հույժ գովելի։

Առանց այդ նորի՝ հոդվածս պարզ հիշեցում ու կրկնություն կլիներ, թեև այդ իսկ՝ ոչ-ավելորդ. նկատի ունենալով 15 դարերում ամրացած ու քարացած զրպարտանքները մեկի մասին, որ անձամբ ինքնապաշտպանման առիթ չունեցավ ո՛չ ողջության, և ո՛չ էլ մահից հետո մի չեզոք կամ սյունիասեր պատմագրի միջոցով։ Այդպիսին չէր կարող ունեցած լինել Սյունյաց ավագ նախարարությունը, բայց հավանորեն այն ոչնչացրին նրանք, որոնք հոգածու եղան տնեցնելու մամիկոնասեր մատյանները։ Միջնադարում էրբ դեռ տպագրություն չկար, հնարավոր էր որևէ տվյալ ձեռագիր գրքի տեղորոշումը, և իմանալ ընդօրինակվածների թիվը. և բարձր կղերի համար դժվար չէր հետապնդել ու ձեռք ձգել այդ բոլորը, և փոփոխել, էջեր պատռել ու նույնիսկ անհետացնել։

448—452 թթ. դեպքերի մասին չեզոք կամ վասակապաշտպան պատմագրերի այժմ չգոյությունը մեծ անպատեհություն է պատմագիտությանը. բայց, մյուս կողմից՝ այդ լիուլի փոխարինվում է նրանով, որ անխուսափելիորեն հակառակորդից պարտադրաբար (վասակատյաց մատենագիրներից) հաղված՝ պոկված վասականպաստ ապացույցները իրենց ՏԵՍԱԿԱՐԱՐ ԻՇՈՒՈՎ շատ ավելի համոզիչ և անառարկելի են, քան վասակատյաց Փարպեցու և մանավանդ Եղիշեի կողմնակցական ու աշառամիտ գովանքները՝ մեկ կողմին, և լուտանքները մյուս՝ Վասակի կողմին։

Իսկ կարծվածից ու սպասվածից շատ ավելի են այդպիսի պոկված ապացույցները հակառակորդից, որոնք միամիտ խոստովանանքների ուժ ունեն, («ի բերանոյ քումմէ դատեցից»), ինչպես ներքևում կտեսնենք։

Եղիշե ասելով ես էլ մեկ անձի (սկզբնագրի հեղինակի) չեմ հասկանում, այլ գիրք, որ հետագայում փոփոխված՝ խմբագրված է. դատելով բազմաթիվ հակասական ու ճշմարտաղանց խոսքերից։ Այս հանգամանքի առնչությամբ հիշենք, թե Խորենացուց և Փարպեցուց հիշված Սահակ-Մեսրոպյան աշակերտների կարգում Եղիշեի անունը չկա. (Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», Ա, 437, Կ. Պոլիս, 1912)։ Նաև, թե այդ գրքի հեղինակ համարված Եղիշեի անունը մոտ 15 սերունդների անծանոթ մնալուց հետո առաջին անգամ հիշվում է միայն չորս-հինգ դար հետո՝ Թովմա Արծրունու կողմից, Թ-Ժ դար, (Բաբգեն վ. Կյուլեսերյան, «Եղիշե, Քննական ուսումնասիրություն», «Հանդես Ամսօրյա», 1905, 354)։ Այդ գրքի խմբագրված լինելը նկատած են Ա. Մ. Գարագաշյանը (120), Գր. Խալաթյանը («Հանդես Ամսօրյա», 1895, 113—116), Գր. Տեր-Պողոսյանը («Հ. Ա.», 1895—96 թթ. հոդվածներում), Միքայել Փ. Փորթուգալը («Եղիշեի ...վան Վարդանալ և հայոց պատերազմին և Քննադատութիւնք», 296, Վենետիկ, 1903), Նիկ. Ադոնցը (0128), Բաբգեն վ. Կյուլեսերյանը («Եղիշե, Քննական ուսումնասիրութիւն». «Հ. Ա.», 1905, 353), Ներսես Ակինյանը (անհնթեք ծայրահեղության հասնելով). Երվանդ Տեր-Մինասյանը («Եղիշե» աշխարհաբար թարգմանված, 1916, 11. 22, 23 և այլն)։

Բանն այն է, որ խմբագրողը (կամ՝ -ները) ունեցած չէ բուն՝ սկզբնագրի հեղինակի մտահղացությունը բովանդակության հետևողականության մասին. այլ՝ իրողությունների հետ բուռն հակավասակ կրքով վարվելով, (ավելի քան նույնիսկ հակահազկերտ ու հակամոգ), խեղաթյուրումներով, ծածկումներով և ինքնահակասումներով լի մի կրոնական դյուցազնավեպ է՝ մյուսած է, թեև՝ հմտորեն, գեղալեզու, տպավորիչ ու հուզիչ, և այդ իսկ պատճառով ավելի կարդացված ու տարածված։ Գրական գեղավորման նպատակով՝ նա հաճախ թեավոր բառեր, խոսքեր, նույնիսկ պարբերություններ քաղած է իր զանազան ընթերցածներից։ Պատմականից

մասին։... Ըստ Փարպեցու՝ Վասակ ցմահ քրիստոնյա մնաց։ (Ն. Ադոնց, «Մարզպան Վասակը պատմաբանների դատարանի առջև» ռուսերեն հոդվածում)։

Հազկերտի դիտումը հարկավ քաղաքական տեսակետ մրն էր։ (Մ. Օրմանյան, «Ազգապատում» Ա, 341)։

Պարսկաստանի բուն նպատակը զուտ քաղաքական էր...։ (Հ. Մանանդյան, «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», 287)։

ավելի (և հաճախ դրան հակառակ), նրա այդ առավելապես գեղարվեստական հանգամանքը նշել են Գր. Խալաթյանը (Մուրճ», 1892, 934—48), Ա. Մ. Գարագաշյանը (117, 150, 163), Վարդան վ. Հացունին («Խորհրդածութիւնք...», 102—3, Վենետիկ, 1896), Միք. Փորթուգալը (13, 23), Նիկ. Ադոնցը (0126), Բարգեն վ. Կյուլեսերյանը («Եղիշե», 202 և այլն), նրան գրախոսող Թովմաս Թերզյանը (450), Բարսեղ վ. Սարգիսյանը («Եղիշեի և Զաքարիա...», 12, Վենետիկ, 1910). Մանուկ Արեղյանը («Հայոց հին դրակ. պատմ.» Ա, 303, 306), Երվանդ Տեր-Մինասյանը (14—5), Լեոն («Հայոց պատմ». Բ, 46, 49)։ Հրանդ Արմենը («Մարզպանը և Սպարապետը», 20, 24 և այլն, Լոս Անճելես, 1952), Հարություն Քյուրտյանը («Հ.» 1952, հոկտ.)։

Ջանազան ուսումնասիրողներ ուշիմ համեմատումներով գտած են թե Եղիշեի գրքում ո՞ր հեղինակներից հաճախակի քաղված արտահայտություններ կան, նույնիսկ պարբերություններով։ Վ. Հացունին ցույց է տալիս Մակարայեցոց գրքից և Փիլոնից (179, 183). Միք. Փորթուգալը՝ Մակար. (366, 372 և այլն). Բ. Կյուլեսերյանը՝ Մարութայից և Փիլոնից. («Հ. Ամս.», 1906, 143, 148 և այլն), Բ. Սարգիսյանը՝ Նիկոդիմոսի Ավետարանից, Գր. Աստվածաբանից, Եպիփան Կիպրացուց և Փիլոնից (6—12, 21—2, 29), Դերենիկ Դեմիրճյանը՝ Աստվածաշնչից («Սովետ. գրական.», 1943, III, 109)2։

Եղիշեի կրոնական դյուցազնավեպ գրած լինելու և չափազանց կրքոտ կողմնակցական լինելու երևսից, գրեթե բոլոր ուսումնասիրողները նրանից շատ բարձր են գնահատում Փարպեցուն որպես պատմագրի, թեև սա էլ է մամլիկոնասեր. այդպիսիք են Ա. Մ. Գարագաշյանը, Վ. Հացունին, Գր. Տեր-Պողոսյանը, Միք. Փորթուգալը, Ն. Ադոնցը, Բ. Կյուլեսերյանը, Մ. Օրմանյանը, Ն. Ակինյանը, Ե. Տեր-Մինասյանը, Լեոն, Հ. Արմենը, Հ. Քյուրտյանը, Ստ. Մալխասյանցը։

Այս հոդվածում քննարկված հարցը և եզրակացությունը լավ պատկերացնելու համար օգտակար կլինի կանխավ նկատի ունենալ հետևյալ չորս տեսանկյունները, թե պետք է որոշակիորեն տարբերել

1. Սկզբնական համազգային շարժումը և հետո հնստման հանգեցվելը։
2. Դիմադրության երկու կերպերը՝ ներդործական և կրավորական։
3. Մարզպան Վասակի առաջին (արտաքին օգնության հույսի պարագայի), և երկրորդ (այդ հույսի դերևման պարագայի) դիրքավորումները։ Այս կետն արդեն շեշտել են Ն. Ադոնցը (ռուսերեն հոդված, 0123, 1904), Հ. Արմենը («Մարզպանը և Սպարապետը», 227—8, 1952) և ետ. Մալխասյանցը («Մատենագիտ. դիտողություններ», 147—9, 1961)։
4. Շարժումը հայոց անկախության կամ ոչ-անկախության խնդրով չէր, այլ Տիզբոնի կողմից խախտված 60 տարվա իրավական գոյավիճակի (modus vivendi) վերականգնումի համար էր, որը վարչագետ Վասակը կարողացավ ետ կորզել Տիզբոնից։ Այս ընթացքում՝ առաջ եկած երկու հակադիր ուղղությունները հարմարացույն է անվանել «Մոդուսականներ» և «Հեստականներ»։ Բյուզանդական ուղղության էլ խնդիր չկար. կայսրը մերժած էր 60 տարվա պարսկապատկան Հայաստանի գործերին խառնվել։

II

ՎԱՍԱԿՈՒԹՅԱՆՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Սքանչելիորեն նախատես ու նպաստակասլաց հանճարի՝ Մեսրոպ Մաշտոցի վարքագիր Կորյունը իր այդ ուսուցչի մասին գրած «Վարք Մաշտոցի» գրքույկում հիշում է մի տասնյակից ավելի աշխարհականների,— հայ, վիր, աղվան,— որոնք քիչ շատ գործակցել են Մաշտոցին, նրանց որակելով կամ բնութագրելով զանազան վերադիրներով։

---

2 Բազմաթիվ օրինակներից ահա մի փոքր նմույշ, ուր Վասակի մահը նմանեցվել է՝ հրեաներին հալածող Սելևկյան արքա Անտիոքոս Դ-ի (174—164) խելագար մահվանը, պատմված՝ Մակարայեցոց Բ. գրքի 9-րդ գլխում.—

Մակար.	Եղիշե
Մինչև յաշաց ...անօրինին Եանդն որդանց ըղխեալ սորսորէր... և ի .նեխուն հոտոյ՝ զոյթացն ամենայնի նեղել տագնապաւ ...այն ինչ՝ բանք ի բերան նորա էին...։ (Տե՛ս Միքայել Փորթուգալ, 393)։	Եռացին որդունք ընդ աչս նորա, և ի վայր սորեցին ընդ ունգունս նորա...։ Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ՅԵՌՈՍԱՍՈՒՆ ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա...։

(Եռանդ—վխտացող՝ եռուզեռ բազմություն)։

Դրանց մեջ մեկը կա, որ արժանացել է Կորյունի ամենաշատ և ամենաուժեղ գովեստներին.—«...այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրև որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր»։

[...Խելացի (խոհեմ, խորագետ) և կանխագէտ (նախատեսող), աստվածատուր իմաստութեամբ օժտված։ Նա շատ նպաստում էր Ավետարանի քարոզմանը։ Եվ հորը որդիաբար հպատակվողի նման և Ավետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչև ավարտ գործադրում էր նրա հրամանները]։

Ո՞վ է այդքան բարեմասնություններով օժտված այդ աշխարհականը, որին տրված գովեստներին չի արժանացած Կորյունից հիշված բանի չափ կրոնորյարից էլ և ոչ մին։

Դա ոչ այլ ոք էր, քան «քաջն Սիսականն Վասակ», որ «այն ժամանակ... Սյունիքի իշխանության գլուխն անցավ», հետագա առաջին հայ մարդպանը, որի վարչության օրով, սակայն, Հայաստանում դեպքերը գահավիժողներ եղան և աղետներ բերին հայ ժողովրդի գլխին, և որի մասին երկու կղերական մատենագիրներ՝ Ղազար Փարպեցի պատմիչը և մանավանդ կրոնական դյուցազներգակ Եղիշեն այնքան սև ու մուր են շռայլում՝ «չարախորհուրդ, նենգավոր, առավել աստվածատյաց, ուխտանենգ, երդմնադրուժ, լիրբ, անամոթ, չարիմաց, անօրեն, ուրացյալ»,— մանավանդ քանիցս կրկնելով «նենգավոր, ուրացյալ»։ Իսկապես անդնդայի՜ն հակասություն։ Կրքոտ վասակատյաց Եղիշեն գրում է նույնիսկ, թե Վասակը «մեռավ իբրև զշուն»...։

Ո՞ր կողմին հավատալ. Կորյունի՞ն (թեև Կորյունը կողմ չէ), թե երկու աշառու վասակատյացներին։ Վճռելը դյուրին կլիներ, եթե մեզ հասած լիներ մի անաչառ պատմիչի ևս գրածը 450—51 թթ. շարժումների մասին. բայց այդպիսին չկա, (թեև խիստ հավանաբար կար, բայց անհետացել է)։ Ուրեմն ինչպե՞ս հասնել արդար վճռի։

Այդ ՀԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՄՄԱՆ վեց միջոց կա.—1. Իբր բանալի գործածել Կորյունի վկայությունը, թեև առարկված է, թե դա վերաբերում է Վասակի նախորդ գործունեությանը (քանի որ գրված է համարվում 443—4-ին, ըստ Ն. Բյուզանդացու). սակայն Վասակի նման մի անձ, ոնո պատանուց՝ խրոխտ հանդեպ Մասանյան արքային (Օրբ. ԺԳ.), Մաշտոցի գործին որդիաբար մասնակից և այն հովանավորող ամբողջ քառասուն տարի, հայ Արշակունի գահատոհմին խնամիությամբ կապված (Փառանձեմ, Արշակ Գ.), որ կարողացած էր լինել «շքեղ և բարձր ի մէջ աշխարհիս Հայոց» (Օրբ. ԺԷ), և անշուշտ ձգտում էր նաև մնալ այդպիսին, օրգանապես և հոգեբանապես չէր կարող Եղիշեի ներկայացրածի պես վատասերվել իր վաթսունանոցական կորովի գործունեության տարիներում. Մանավանդ որ այդպիսով ասպարեզը թողած կլիներ իր ուրացյալ փեսա ատելի Վարազ-Վաղանին։ 2. Ուրիշ մատենագիրների վկայությունները։ 3. Դեն շպրտել երկու վասակատյաց մատենագիրների վերաբերմունք արտահայտող մասերը, օգտագործելով միայն, իրե՛նց իսկ պատմած, զուտ պատմակա՛ն իրողությունները[3]։ 4. Ավարայրի ճակատամարտի ընթացքը և անմիջական հետևանքները։ 5. Ապստամբության երկարատև հետևանքները հայ ժողովրդի համար։ 6. Նկատի ունենալ մանավանդ Եղիշեի գրքին ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ վաթսունից ավելի պարագաներում, որոնցից հիշենք միայն մի քանիսը.

1. Հազկերտ 2-րդը Բյուզանդիո վրա հարձակվելիս իբր թե «հարվածեց մինչև Մծբին քաղաքը» (102)։ Բայց Մծբինը արդեն Պարսից էր պատկանում երեք քառորդ դարուց ի վեր, ըստ Յովհան կայսեր կնքած ամոթալի դաշինքի, 364 թ.։ (Միք. Փորթուգալ, 180)։

2. Երկու վասակատյաց մատենագիրները Վարդան Մամիկոնյանին վերագրում են լոկ կրոնապաշտպան շարժառիթ, բայց Մամիկոնյաններն էլ, ինչպես մրցակից մյուս մեծ նախարարությունները (Սյունիները, Արծրունիք, Բագրատունիք) ունեին իրենց տիրապետական մեծաբաղձությունները։ Նա՝ այդ ի՛նչպես է որ սահակակիրթ երեք եղբայրներից ոչ մեկն էլ կրոնավոր չդառավ... (Վարդանը, Համազասպյանը, Հմայակը)։

3. Եղիշեի գրքում ասվում է, թե Վասակը նենգությամբ ու քսությամբ իր հորեղբայր Վաղինակին սպանել տալով էր, որ նրան հաջորդած էր որպես Սյունյաց տանուտեր (206)[4]։ Բայց Մաշտոցը այդպիսի ոճրագործին իրեն գործակից չէր անի, ոչ Կորյունը նրան մեծապես կգովեր,

---

3 Այս կերպը թելադրել են Դարագաշյանը (183) և մանավանդ Ն. Ադոնցը (0123)։

4 Եղիշեից էջերը՝ պրոֆ. Ե. Տ.-Մինասյանի աշխարհաբար թարգմանությունից (1946 թ., Երևան)։

ոչ էլ Վռամշապուհ արքան նրան (Սյունյաց) տանուտիրություն կտար. (Որբ. ԼԳ.)։ Խորենացին էլ Վասակի մաշտոցյան գործակցության մասին խոսելիս, անշուշտ, կհիշեր նաև այդ ոճիրը, ինչպես շատերինը հիշած է։ Իսկ Սյունյաց պատմիչ Ստ. Օրբելյանը (13-րդ դար), որ Վասակի մասին բացասական (ընդսմին՝ կարեկցախառն) տողեր էլ ունի հետևելով Եղիշեին ու Փարպեցուն (ժէ), չորս անգամ հիշում է Վաղինակին, առանց սակայն սրա սպանված լինելն ակնարկելու (ժգ, ժդ, ժե, «Պատմութիւն նահանգին Սիսական»)։ Չունի նույնիսկ Մամիկոնյանց պատմիչ վասակատյաց Փարպեցին.

Վասակ այլ պարագաներում էլ մարդասպան չեղավ՝, թեև որպես մարզպան իրավասու էր մահով պատժելու։ Օրինակ նա միայն, երբեմն անտեղի հեստումը զսպող, պատանդ վերցրեց իր մարզպանական իրավասության դեմ ըմբոստացող, միջամտող, դժվարացնող ու պատասխանատվություն հրավիրող Մամիկոնյանց, Կամսարականաց և այլ նախարարների զավակներին. (Փարպ. Բ. լզ.)։ Նաև իր երկու եղբորորդիներին «հեռացրեց քշեց երկրից» և ոչ թե սպանեց. (172)։ Եվ այսպես շատ պարագաներում զսպողի բանտարկեց, բայց չսպանեց. (158 և այլն)։ Ընդհակառակը Վասակ մարզպանի բարվոք վարչության դեմ ըմբոստացողներն էին, որ սպանում էին. օրինակ՝ իրենց համակարծիք չնղող մի նախարարի (ըստ Փարպեցու «Զանդազան») քարկոծեցին (148), և շատ պարսիկների, փոխանակ պատանդ վերցնելու, և իրենց պայմանները պարսից պարտադրելու միջոց անելու։ Մինչդեռ Վասակը միայն ճամոզիչ ու զսպիչ միջոցներ գործածում էր, այդ երկու մատենագիրների իսկ քանիցս վկայությամբ. (Փարպ. Բ. լզ., նաև Եղիշե 169, 170, 171 172), մինչև անգամ Ավարայրի դաշտում «շատ օրեր» (180) իբր վերջին փորձ։

Սյունիքում հեստականների գործած խժդժություններն այնքան սաստիկ էին, որ «եպիսկոպոսների ժողովն ու քահանայության ամբողջ ուխտը դառն արտասուք էին թափում չարաչար վշտացածների վրա» (160)։

Վասակը, բացի Կորյունի կողմից վերադրված ոգուց, մի քանի շարժառիթներ էլ ուներ սպանությունների չդիմելու։ Նախ՝ իր մարզպանի պաշտոնի պարտագրած պատասխանատվությունը։ Երկրորդ՝ իր այդ մարզպանական վարչությունը շաղարտելը։ Երրորդ՝ իր մեծարաղձությունը՝ արքայանալու տենչն իրագործելու հեռանկարում հայ ժողովուրդը սիրաշահելը, որպեսզի իր դեմ չհանի այնպիսի նախարարների, որոնք չէին քաշվել վերջին Արշակունի արքան գահակրկելուց, և վերջին Պարթև հայրապետ Սահակի դեմ բողոքելուց, Տիզբոնում, 428 թ.։

Վասակը, իբր վարչական-մարզպանական պատասխանատվություն ունեցող, Ավարայրի «հակատամարտից» հետո՝ միայն, հեստումը ճնշելիս, սպանության դիմեց, ըստ Եղիշեի, այն էլ որպես զինվորական գործողությունների (195—198)։

Այստեղ թվում է, թե Եղիշեն իր գրական կարկատաններից զատ պատմային կարկատաններ էլ է արել։ Եղիշեի հայտնած ոճիրը թվում է թե նմանեցումն է շուրջ կես դար առաջ կատարված մի այլ Վաղինակ Սյունու սպանության, Փառանձեմ թագուհու դրդմամբ, և Արշակ 2-րդ արքայի կարգադրելով, որպեսզի Վաղինակի սպարապետության [Հայոց արևելյան զորքի] պաշտոնը տրվի Փառանձեմի հորը՝ Անդովկ Սյունուն. (Խոր. Գ. ժը և իդ)։ Արդյոք Ավարայրում հայ զորքի թիվը՝ 66.000-ն էլ նմանօրինակ կարկատան չէ՞։ Համեմատել Գրիգոր Լուսավորչի կողմից 66 օր ապաշխարեցնելը Տրդատ 3-րդին և մեծամեծներին [Ագաթ. ճ.]։ Նաև՝ քրիստոնեական Ս. Գրոց վերջին՝ «Յայտնութիւն Յովհաննու» գրքի ԺԳ գլխի վերջին երկու տողերում հիշված գազանի թիվը 666։ Հիշենք նաև շատ ավելի վաղ Շումերի 60-որդական թվարկությունը, փոխանակ մեր տասնորդականի)։

4. Կրոնական դյուցազնավիպող Եղիշե վարդապետից, իր ավելի ազդու և համոզիչ դառնալու կապակցությամբ, ակնկալվում, նույնիսկ պահանջվում էր, որ նա հիշած լիներ քրիստոնյա Հայաստանի մեծ գործիչները՝ Գր. Լուսավորիչ, Ներսես և Սահակ Պարթև, Մաշտոց և այլն։ 5. Նա չի հիշած նաև մի քանի անուն այն «Տիկնայք փափկասունք»-ից, որոնք իրենց նահա-

---

5 Ռեալիզմի հակառակ՝ աննկարելի ճշմարտանցություն է Գ. Ջանիբեկյանի «Վարդանանք» թատերկում Վասակի որպես մարդասպանի ներկայացվելը նույնիսկ իր ընտանիքի անդամների՝ մոր վերաբերմամբ։ Պատմավեպ և կամ պատմական թատերկ գրողը ազատ է պատմական բացերը լրացնելու, դեպքերի և դեմքերի շուրջ մանրամասներ ճարտարելու, բայց առանց պատմական ճշմարտությունը խեղաթյուրելու։

6 Մի թ. Փորթուգալ, 281։

տակված կամ աքսորված սիրելիների վշտից, կամովին հրաժարվում էին աշխարհային ճոխ կյանքից, և որոնցից 500-ը «յականէ լանուանէ» հանձնում էր։ Չէ՞ որ դրանով մի քանի հայ սրբուհիների անուններ կավելանային հայ եկեղեցու տոնացույցում։ 6. Չի հիշում, Վրթանես հայրապետի կողմից հայ եկեղեցու տոնելի սուրբերու կարգը դասված Վաչե Մամիկոնյան սպարապետին, (Հայաստանը և նոր կրոնը բազմիցս աջողապես պաշտպանելու և ի վերջո զոհվելուն պատճառով)։ 7. Չի հիշում Ավարայրից փախչելուց հետո ապաստան և պաշտպանավայր դարձած ամրոցի անունը, մինչդեռ հիշում է երեք-չորս տասնյակ նվազ կարևոր տեղանուններ — Արփանյալ, Հեմմատակ, Փասխ և այլն։ 8. Չի հիշում այդ ամրոցի պաշտպանների գլխավորներին (բացի անսովոր անուն Բակից), ոչ էլ Հայաստանի զանազան գավառներում դիմադրել շարունակողներին (բացի Հմայակից),— Խաղտյաց, Տմորյաց, Արցախի և Միջնաշխարհի կողմերում։ 9. Չի հիշում Ավարայրից փախչող (փախ արմատով բառեր գործածում են քանիցս թե՛ Փարպեցին և թե՛ Եղիշեն) նախարարների անունները (Վարդանի Եղբայրը, փեսան և այլն), թեև իր գրքի սկիզբը՝ ընծայականում խոստանում է գրել նաև «նոր կացածների վատթարությունը», և Ավարայրի ողբում էլ «վախկոտների փախուստը... անարի մարդկանց սրտաբեկությունը»։ 10. Չի հիշում, թե Վասակի դատի միջոցին՝ սրա ո՞ր ազգականներն էին նրան ամբաստանում (օրինակ՝ Վարազ-Վաղան փեսան), և նրա «ուրացող ընկերներից» որո՞նք էին այն «շատերը», որ «բաց արեցին» նրա գործած չարիքները։ Այսպես՝ նա հաճախ անստուգելիների և դժվարստուգելիների դեպքում իբր թե մանրամասնում է, իսկ ստուգելիների պարագային՝ իր խոսքերն անորոշ են և կամ ընդհանուր բնույթի, և կամ լռում է։ 11. Չի հիշում Վասակ մարզպանին դավող երկու անձերի։ Մին՝ Վասակի փեսա քինախնդիր «պիղծ, դիվազգեաց, չարիմաց, անօրեն Վարազ-Վաղանը» Պարսկաստան փախչելով կրակապաշտ դարձած էր, դիմելով «չարահնար» դժնամիտ, չարախորհուրդ, առավել անօրեն, թունավոր, խորամանկ և պարսից ամբողջ տերության հրամանատար և իշխանին՝ լի դառնությամբ ծերին՝ Միհրներսեհ հազարապետին», և դարձած էր սրա «անօրեն մահաթույն գրգռիչ սատարը» Հայաստանը կրակապաշտ դարձնելու, և այդպիսով իր աներ Վասակ մարզպանին դժնդակ ու երկսայրի կացության մեջ դնելու։ Միհրներսեհն էլ մոգերի վաղուցվա նպատակը եղող այդ խորհրդի կենսագործման առիթը Հազկերտ 2-րդին հիշեցրած էր։ Արքան հաճած էր դրան, խորհրդակցած՝ ավազանու և մոգերի հետ, և Բյուզանդիայի անզոր անգործության պայմաններում, կրոնափոխման հրավերի հրովարտակ գրել տված էր, ուղղված՝ պարսկահպատակ բոլոր քրիստոնյաներին։ (Փարպ. Բ. ի-իա։ Օրբ. ժէ)։ Փարպեցին, որ 2 տարի ապրած է Սյունիքում (տե՛ս իր «Թուղթ»-ը) անշուշտ ավելի տեղյակ էր Վասակի մասին պատմված իրադարձություններին։

Եղիշեն թաքցնում է նաև պարսիկ Դենշապուհ պաշտոնատարի կողմից հրաժարեցված նախկին հաղարապետ Վահան Ամատունու առաջ «դուլ ու դադարի» ոխակալորեն դրդելը Վարդան Մամիկոնյանին (նույնիսկ դեռ կայսրից օգնություն չխնդրած), որպեսզի շուտ սկսի ապստամբությունը. այդպես ստիպում էր՝ ձևացնելով, թե միայն հոգու փրկություն գտնելովն է մտահոգված, թեև «ոչ հոգալով ինչ... յայն միտսս.—որեէ հոգ չունելով այդ գաղափարի համար։ Մինչդեռ նախատեսում էր, թե եթե Վասակ մարզպանը չհավանի ապստամբել, Վարդանանց կողմից «անարժան մահ» կգտնի, իսկ եթե հավանի, Տիզբոնում պատանդ նրա երկու որդիները չարշարվելով կմեռցվեն, և՝ կամ երկար ժամանակ կապանքների և բանտերի մեջ կտանջվեն անխնա. (Փարպ. Բ. լա.)։

12. Ընծայականում նա ճշմարտազանցորեն գրում է, թե «պատերազմի ...մեջ քչերի հանդեպ շատերն առաքինի գտնվեցին (99), մինչդեռ գահնամակում հիշված 70 նախարարություններից (313—4) միայն 24-ը ներկա էին Ավարայրում Վարդանանց կողմը, իսկ 66000-ից էլ (176) միայն 285-ը զոհվեցին այնտե՛ղ (192), միայն ի՞նը նախարարություններից։

13. Եղիշեն հաճախ մեղադրում է քրիստոնեահալած Հազկերտին, բայց գրեթե ոչ՝ Թեոդոս կայսեր, որ նրան վերադարձրեց Պոլիս ապաստանած քրիստոնյա պարսիկներին, և նույնիսկ նրան կոչում է «երանելի, խաղաղասեր, քրիստոնյա»։

14. Եղիշեն այսպիսի հրաշքների հավատում է, թե Վարդանանք Աղվանքում «բոլորին սրի ճարակ արին և փախցրին»!! (156)։

15. Եղիշե հենց միևնույն խոսքում (170) մի հակասություն է ծրարում. «Երդվում էին սուրբ Ավետարանով... թե «թագավորի կողմից ամենքին պետք է շնորհվի քրիստոնեությունը»։ Եվ այսպես ...շատերին... տանում ու խոռոնում էին ուրացողների խմբին»։ Ուրեմն հենց Ավետարանի միջոցով հնարավոր է այդ Ավետարանն ...ուրանալ. և քրիստոնեություն շնորհելով էլ

ուրացողներ ավելացնել, և ոչ թե քրիստոնյաներ։ Բայց մանկապարտեզի մանկանը կարո՞ղ եք հավատացնել, թե, օրինակ, խնձորներն ուտելով սրանք ...կավելանան...։

16. Եղիշեն, որ հայր է համարում Ավետարանը (149), որ պատվիրում է թշնամուն իսկ սիրել և «մարմնավոր տերերին ծառայել7, ինչպես Աստծուն» (105), Սահակ հայրապետի թոռան՝ կրոնակիրթ Վարդանի բերանը դնում է սա տղայավայել խոսքերը. «Անօրեն իշխանին խաբեցինք... ինչպես մի անպիտան մանուկ տղայի, երբ երեսանց նրա ամբարիշտ կամքը իբր կատարեցինք..... մոգերին էլ անողորմ կերպով կոտորեցինք» (177). փոխանակ պատանդ անելու։ 17. Նա քարոզող Ղեոնդ Երեցի բերանն էլ սա խոսքն է դնում, թե ռազմադաշտ եկած կղերականները «կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել... ավելի լավ համարում են մեռնել, քան մեռցնել. (186)։ 18. Փախուստից ու դատից հետո նախարարներն ու կրոնորյարն ասում էին. «Քաջությամբ պատերազմեցինք»!! (206)։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ ԷԼ ՈՒՆԻ ԻՆՔՆԱՀԱԿԱՍՈՒՄՆԵՐ, թեև ոչ Եղիշեի չափ. նա մի անգամ ուրախանում է, որ հետախույզ Առանձար 300 այրուձիով Պարսից վերջապահ գնդի վրա հարձակվելով շատերին սպանել և մնացածներին փախցրել է։ Իսկ մի էջ հետո պատմում է, թե Վարդանի բանակը Պարսից բանակատեղիի դիմաց հասնելով սրանց «անպատրաստությունը» գտավ, և եթե հայերը կամենային, կարող էին վնասել նրանց, բայց նահատակություն փափագողները մտադրած չէին հաղթել, «այլ... տենչալի մարտիրոսութեան փութանային հասանել» (Բ. լէ, լը)։

III

ՎԱՍԱԿԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

1. Կորյունի հիացական ուժեղ գովեստը։ ինչպես վերը տեսանք։ 2. Խորենացու դրական վկայությունը գրված 483—485 թթ. (ըստ. ակադ. Ստ. Մալխասյանցի), այսինքն 450—451 թթ. ապստամբությունից մի սերունդ հետո։ Այդպիսի դրական վկայությունը (Գ. ծդ) անհնար կլիներ մի բացասական տիպի մասին, որպիսին ներկայացնում են երկու մսմիկոնասեր աշառամիտ մատենագիրները, մանավանդ Եղիշեն։

Նկատենք թե միայն Վասակին է վերագրվում մշակութային-վարչական գործունեություն, իսկ նրա ժամանակակից նախախարներից՝ և ոչ մեկին։ Ներքևում կտեսնենք Սյունյաց դպրոցի մի հազարամյակ կատարած բազմարդյուն դերի մասին։ Եվ որպես Մաշտոցի գործին երկարամյա հովանավոր, նաև որպես Հայաստանի կառավարիչ, լոկ Վասա՛կն էր, բոլոր նախարարներից, որ ուներ համահայկական-համահայաստանյան մտահոգություններ երկրում, (Հայաստանում հնարաշափ կենտրոնացյալ իշխանությունը հայ մարզպանի ձեռք անցկացնել, և այլն) դրանց զուգակցելով, բայց առանց գերադասելու, իր շահերն էլ։ 3. Ուշագրավ է, թե Վասակի դիրքի երկու բարձրացումներն էլ կատարված են ազգագուտ՝ բարենպաստ, ոչ-այլասերիչ իրադրությունների մեջ, առանց քծինքի։—Սյունյաց տանուտերությունն ստացավ Իրանի վստահությունը վայելող և հայ տառերի գյուտի ձեռնարկը հովանավորած իմաստուն Վռամշապուհ արքայից (Օրբ. ԺԳ), Հազկերտ Ա-ի օրով (399—419), որ քրիստոնեից հանդեպ շատ համակիր էր, և չէր հակառակած Հայաստանում գրի, գրականության ու հայատառ դպրոցների ստեղծմանն ու ծաղկմանը։ Իր Իշխանության միայն վերջին քառորդում էր, որ նա հալածեց քրիստոնյաներին Իրանում, (բայց ոչ Հայաստանում), դի Տիզբոնի ասորի Արդաա եպիսկոպոսը հիմարաբար շփանալով հախուռնորեն քանդած էր մեծ կրակատունը, և մերժած էր վերաշինելը. (Հ. Արմեն. 117)։ Հայաստանին էլ թագավոր տվեց իր Շապուհ որդին (415—419), Վռամշապուհի մահից հետո։

---

7 Իսկ չէ՞ որ Վասակ մարզպանն էլ «մարմնավոր տեր» էր. ինչո՞ւ նրա վարչության դեմ հեստոդներին պանծացնում է իր ամբողջ զրնում...։ Բացարձակ ինքնահակասում և ճշմարտաղանցում։

8 Նահատակվել բաղձացողի մտայնության սա տիպիկ օրինակը տալիս է Ներտուլիանը,—Ասիա Նահանգի Հռովմայեցի կառավարիչ Արրիոս Անտոնինը իր մոտից վռնտեց մոլեռանդ քրիստոնյաների մի բազմություն, որոնք պահանջում էին իրենց նահատակել։ «Իմ ի՞նչ գործն է,—ասում էր կառավարիչը,—եթե մեռնել ուզում եք, միթե բավական չվաններ և կամ գահավեժներ չկա՞ն»։ (J Robertson, „History of christianity". 81):

Վասակի 2-րդ բարձրացումը (մարզպանության) եղած էր Հազկերտ Բ-ի իշխանության (438—457) սկիզբները, որ իր առաջին յոթը տարիներում հալածանք չհանեց, ըստ ասորի հեղինակ Կարքա դը Բեթ Սլոքի («Եղիշե» աշխարհաբար, 47)։

Շահեկան է գուգահեռը մեր Վռամշապուհ արքայի և Վասակի միջև.—երկուսն էլ պատանդ են եղած Իրանում, և ուստի քիչ-շատ ծանոթացած այնտեղի ներքին կացության, և անշուշտ ծանոթներ ու բարեկամներ ունեցած այնտեղ, (Միք. Փորք 178, և Օրբ. 50)։ Երկուսն էլ՝ խոհեմ և իմաստուն. արքան անհնատես Սահակ հայրապետին խորհուրդ տվեց, որը ընդունվեց. մարզպանը՝ Հովսեփ հայրապետին, որ չընդունեց և ծանր աղետների դուռ բացավ. (Խոր. Դ. ծա. և Եղիշեի մոտ՝ հնստականների բազմավնաս հլությը Ավարայրում)։ Երկուսն էլ՝ մաշտոցյան գործունեության հովանավոր և աջակից։ Երկուսն էլ՝ իրատես ու խոհեմ քաղաքականություն վարող։ Վռամշապուհի որդի Արտաշես Գ. արքան ամբաստանվեց մի շարք (հավանաբար Այրարատ նահանգի շուրջի) հայ նախարարների կողմից, Իրանի գահակալ Վռամ Ե-ի առջև, և գահազրկվեց ու վար դրվեց այնտեղ։ Վասակ մարզպանն էլ ամբաստանվեց մի շարք հայ ավագ նախարարների ու կրոնավորների կողմից. և լրիվ պաշտոնազրկվեց ու արգելվեց Իրանում։

4. Անգովկ Սյունու (Արշակ 2-րդի աներոջ) 30—40 տարի հակապարսիկ պայքարի պատճառով Շապուհ 2-րդի քանգած-ավերած Սյունիքը թեև կրկնապատիկ վերաշինված էր Անդովկի որդի Բաբիկի (Վասակի հոր) կողմից, (Օրբ. ԺԳ), բայց հետագայում իր որդի Վասակն էր, որ իր 40-ամյա իշխանության միջոցին հոգ տարավ այնտեղի եկեղեցական կազմակերպության և ուսուցման մասին, (Օրբ. ԺԶ.). «նորոգութենէ խաւարեալ և խոպանացեալ» էին եկեղեցին և Սյունյաց մետրոպոլիտությունի աթոռը. «Քանզի ի վաղուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի, յաւերմանէն Անդոկայ մինչև ցտկրութիւն Վասակայ իշխանին»։ Հիշել, որ եթե երասխը բնասահման համարենք, ոչ թե Վասպուրականում, այլ Սյունիքում էր Գողթնը, որ Մաշտոցը (ըստ Կորյունի) իր «դաստակերտն» էր համարում, իր ամենաերկարատև քարոզչական, կազմակերպական և ուսուցողական բուռն գործունեության գավառը։ Իսկ Վասպուրականի ոչ մի իշխան (Արծրունի) չի հիշվում որպես Մաշտոցի գործակից, այլ՝ Վասակը։

5. Մաշտոցի որդիաբար (ըստ Կորյունի) ծառայող-գործակցող Վասակը նրա վերջին մի փափագով հայրապետական տեղապահ նշանակած Հովսեփին որպես հայրապետի վավերացնել ավեց Սասանյան արքունիքին. (խիստ անհավանական էր, որ նա տասնյակ տարի մնար առանց վավերացման), այդպիսով այդ արքունիքի նշանակած երկու ասորի կաթողիկոսներից հետո եկեղեցական գերագույն պաշտոնը նորեն հայությա՛ն վերադարձնելով։ Ճիշտ ինչպես որ Հայաստանի կենտրոնական վարչությունը առաջին պարսիկ մարզպանից (առաջին) հայ մարզպանի (իր իսկ) ձեռք անցկացրած էր։

Արդարև Վասակի մարզպանության տարիներին էլ լրիվ կհարմարվի Եղիշեի վկայությունը. թե «աստվածապաշտությունն բարձրագույն կամակորությամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբանէ տերութենան Շապհոյ արքայից արքայի մինչև ցամն երկրորդ Յազկերտի... որդւոյ Վռամայ» (Եղիշե. Ա. յեղանակի սկիզբները)։

6. Վասակ մարզպանը հնարավոր դարձրեց Նահապետյանի ժողովը, 444 թ.։

7. Վասակի համար մի բարենիշ է տվելը Միհրներսեհ հազարապետի նման «շարահնար և դժնամիտ» (Փարպ. Բ. ի.) մի անձի կողմից, որ իր մոտ ընդունել ու մտերիմ խորհրդական էլ դարձրել Վասակ աներոջից փախած «շարիմաց, պիղծ, խելացնորը» Վարազ-Վաղանին, որ կրոնուրաց լինելով դավում էր Վասակին ու Հայությունը. («Եղիշե, 168։ Փարպ., Բ, ի, իա)։

8. Վասակ Սյունին էր, որ հնարավորեց, նույնիսկ նախաձեռնեց դումարել Արտաշատի բոլորարկու (կրավորական դիմադիր) ժողովը, որպես առաջին ավագ նախարար (ըստ Գահնամակի), որպես մարզպան, և որպես միակ հիշված գործակից հայ նախարարը Մաշտոցի. բայց նաև որպես ամենաշատ տուժելիքը կրոնափոխության հրավարտակից.— Ա. Եթե ուրանար և հայերին ուրացության մղեր, նա կդարձեր «շքեղ և բարձր ի մէջ աշխարհիս Հայոց» լինելուց։ Բ. Նա կսպանվեր՝ առիթ գտնող հակառակորդների կամ մոլեռանդների կողմից, ինչպես սպասում էին իր ուրացյալ փեսա Վարազ-Վաղանը Տիգրոնում (Փարպ., Ի), և Վահան Ամատունին Հայաստանում (Փարպ., ԼԱ)։ Գ. Եթե չուրանար և ժողովրդին չուրացներ, նա կդարձեր «յոյժ մեծարգո և երևելի ի դրան արքունի» լինելուց։ Դ. Կկորցներ մարզպանության պաշտոնը։ Ե. Կկորցներ Սյունիքի տանուտերի դիրքը։ Զ. Կշարշարվեին կամ կսպանվեին իր երկու պատանդ որդիները Տիգրոնում (ինչպես սպասում էր Վահան Ամատունին)։ Է. Հաղթանակած կլիներ իր փեսան՝ «ըստ Նմանութեան սատանայի, շարիմաց, պիղծ, խելացնորը»։ Բայց, ինչպես տեսանք, նույնիսկ բա-

ցարձակապես անձնական տեսակետից՝ Վասակի նման խրոխտ (անգամ Սասանյան արքա Վռամ Կրմանի դեմ), հանճարեղ, և 40 տարվա մաշտոցյան գործակցություն ունեցած մեկը, եթե մի պահ մտքից անցկացներ էլ ուրանալ, դավաճանել ու մատնել, հոգեբանապես չէր կարող անել այդ. քանի որ այդպիսով իր սպանել ցանկացած և փախստական և ուրացած փեսա Վարազ-Վաղանի նախաձեռնությանը համակերպած, և այդպեսով Տիզբոնի կողմից նրան նախընտրվելուն հավանած ու հետևած կլիներ։ Իսկ այդ կնշանակեր իր դատավճիռը՝ մահավճիռը իր իսկ ձեռքով ստորագրած լինել։ Վասակը, նույնիսկ մահամերձ, կվերակենդանանար այդպիսի փեսայի դեմ պայքարելու։ Ոչ, Վասակը պարտվող չէր լինի։

Եվ այստեղ շատ դիպուկ կլինի ենթադրել ու կռահել թե Վասակի իմաստուն և յառաջիմաց հանճարը մի զաղտնի ելք հնարեց շրջանցելու, ավելի հիշտը՝ դիմանցելու իր և հայության միահյուսված գերագույն շահերին (որոնց մեկին վնասվելովն մյուսն էլ կվնասվեր անպայման) սպառնացող աղետը, դերևելու համար իր դավադիր փեսայի շարախինդ հեռանկարները, և ստիպելու Տիզբոնը որ ջնջի երկուստեք վնասակար և կարճամիտ ու մոլեռանդ հրովարտակը։ Վասակի այդ երկու հանգամանքները,—եզական ձիրքերն ու սպառնացվածությունը,— հրամայում են մեզ կռահելու և լրացնելու մի պատմական բաց, որ կբացահայտվի երկու հարցումներով.— Ա. Ինչո՞ւ Վասակ Մարզպանը իր երկու որդիները Տիզբոն տարավ (որոնք Հազկերտը պատանդ վար դրեց)։ Բ. Ինչպե՞ս է, որ կանչված տասը ավագ նախարարների Տիզբոնում «մեծաւ անարգանօք» գտնվելու ժամանակ, խորշակուտ և «անճանապարհ Սագաստան» անդարձ աքսորվելու ճիշտ նախօրյակին՝ հանկարծ «գուժկան հասանէր ի կողմանց Քուշանաց» թե թշնամիներից մի գունդ անչատվեց և բազում արքունի գավառներ ավերեց։ Եվ այս նրանց մեծ օգնություն եղավ երկնքից։ Եվ անօրենը (Հազկերտը. Վ.) «ճեպեալ տագնապէր զայրուձին յառաջ արձակեալ» (տագնապում ու աճապարում էր, հեծելազորը հառաջ արձակելով) ինք էլ շտապում էր փութով հետևից գնալ, և իր մտադրությանց մեջ խոցվելով հրաժարվում էր իր առաջվա հաստատուն երդումից։

Այդ պատմական բացը կլցվի խիստ հավանական ու դիպուկ այս լուծումով.—

Հենց որ կրոնափոխության հրովարտակը Հայաստան հասավ, Վասակը նպատակ դրեց, վերադաս գահավիժումը Հայաստանի գլխից Իրանի գլխին փոխանցելու միջոցով, Տիզբոնն ստիպել համոզվելու, թե Վարազ-Վաղանի ծրագիրը չի քայլի, վնասակար է Տիզբոնին։ Սրա համար էլ անշուշտ իբր հնարավոր միջոցներ գործածեց՝ ա. Հայոց կողմից ընդդիմություն։ Բ. Արտաքի՛ն դժվարություններ փաթաթել Սասանյան արքունիքին։ Եվ նա, անշուշտ, խսկույն գաղտնի սուրհանդակ ուղարկեց Հոն-Քուշանների իրեն «բարեկամ... ուխտիւ և երդմամբ» զորագլուխներին, բնականաբար նվերներով հանդերձ, (Փրպ., Բ. խե, Եղիշե, 203)։ թե՝ ճիշտ ժամանակն է Իրան արշավելով ավարելու և ավերելու։ Նրանք այդ արեցին, ինչպես վերևում տեսանք, ինչ որ շատ ուրախացուց հայ նախարարներին, ամենաշատը՝ Վասակին, որ հեղինակն էր այդ թնջուկին։ Եվ քուշանների տագնապեցրած Հազկերտը գոհացավ և ուրախացավ հայ նախարարների ձևական ուրացմամբ[9], որոնք հիմա Սագաստանի փոխարեն Հայաստան ուղարկվեցին, ուր գործադրվելու էր երկրորդ միջոցը՝ հայերի դիմադրանքը, սկսված՝ Արտաշատի ժողովից արդեն, և վերսկսելու Անգղում։

Իսկ իր երկու որդիներին հոժարաբար պատանդ ներկայացնելու։ Նախաձեռնումը պարզապես Հազկերտի ավելի՛ վստահությունը գրավելով նրան միամտացնելն ու քնացնելն էր իր՝ Վասակի գաղտնի նյութած դավի հանդեպ. նաև՝ դավադիր Վարազ-Վաղանի քսությունը, դրդումները և լարած ծուղակը չեզոքացնելու միջոց։

9. Վասակ մարզպանն էլ Տիզբոն կանչված, և այնտեղ օրերով վար դրված ու կրոնափոխության բռնադատված տասը գլխավոր նախարարներից մեկն էր, ընդսմին՝ կասկածելի էլ համարվելով, և ուստի իր երկու որդիքը պատանդ վար դրվելով Հազկերտի մոտ։

10. Ըստ Փարպեցու (Բ. լ.) կեղծ ուրացմամբ Հայաստան վերադառնալուց հետո, Վարդանը, երբ տեսավ իրենց սգալով ընդունող ժողովուրդը և մոգերի ձեռնարկումները, և չհանդուրժելով, ամբողջ ընտանիքով Բյուզանդիա մեկնեց, ձեռնթափ լինելով իր ընդարձակ կալվածքներից էլ։ Այդպիսով, երբ տիրում էր «...տարտամ դրություն... գլուխկորցրածություն... երերուն կացություն, Վասակ մարզպանն էր միայն, որ խոսեց այրական ձայնով, և ցույց տվեց, թե ինչ սիտի անի երկիրը Սասանյան ահի առաջ ինքն իրեն պաշտպանելու համար։ Նա ուղղակի ծրա-

9 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, 356—7։

գրում էր մի մեծ ապստամբական շարժում...»[10]։ (Լեո, «Հայոց պատմ.», Բ, 70)։ Վասակ մարզպանը, օգտակար չգտնելով սպարապետի այդ հուսալքումն ու հրաժարողությունը, բոլոր տանուտերերի և ավագ սեպուհների «զմիտս ամենեցուն յիւր կամսն հաւանեցուցանէր», ասելով թե պետք է Վարդան զորավարի ետևից քահանաներ ու ավագ տանուտերեր փութացնելով աղաչել ու ետ դարձնել, «զի առանց Նորա մեր այս ամենայն կամք ու խորհուրդք» ոչ մի բանով չեն իրագործվի։ (Դիտել այստեղ ուղղամտորեն գնահատող Վասակի խոնարհ վերաբերմունքը Վարդանի հանդեպ)։ Եվ հաջողեցան ետ բերել Վարդանին։ Նշանակում է, թե Վասակը չէր ուզում, որ հայ ժողովրդի մեջ հուսալքումը տարածվի, և դիմադրական ուժը պակասի, հետևելով ձեռնթափ սպարապետի օրինակին։ Չէ՞ որ պետք չէր ամեն ինչ կորած համարել. դեռ կային փորձվելիք միջոցներ, և պետք էր հենվել առայժմ կրավորակա՛ն դիմադրության վրա։

11. Բացի կրավորական դիմադրությունից և համբերությամբ սպասելուց, (քանի որ արտաքին կամ ներքին հանկարծական փոփոխություններ կարող էին ազդել Պարսկաստանի ունեցած և բռնած դիրքի վրա), ինչպես այդ պատահած էր երկու անգամ հենց այդ իսկ ամիսներում (135, 162),— կար նաև կայսրից պաշտպանություն խնդրելու փորձը, որը Վասակը խոստացած էր կատարել՝ Վարդանին ետ դառնալ առաջարկող նամակում (ըստ Վասակի հետագա դատի միջոցին Արշավիր Կամսարականի վկայության, Փարպ., Բ, խե)։ Բայց այդ փորձն ապարդյուն անցավ։ Այդ գաղտնի փորձով ամենամեծ ռիսկ անողը Վասակն էր, քանի որ կարող էր կորցնել թե՛ իր երկու դիրքերը (Սյունյաց տանուտերի և մարզպանի), և թե՛ իր երկու պատանդ որդիներին, մինչ մյուս նախարարները լոկ իրենց տանուտերի դիրքը։

12. Խոհեմ, կանխագետ, իմաստուն և հանճարեղ Վասակը Մարկիան կայսեր մերժումից հետո էրբ տեսավ թե հոները էլ Հազկերտին են ծառայում (129), ունեցավ իր նոր՝ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ.—այլևս վնասակար համարեց դեպքերը գահավիժել ներգործական դիմադրությամբ[11]։

13. Եվ նա խիզախ մտանեղությամբ ունեցավ շարժման՝ ու սպառնացող ապստամբության նախապատճառն իսկ վերացնել հենց Տիզբոնի արքունիքում, սրան հասկացնելով, թե Պարսից պետությանը քաղաքական, զինվորական և տնտեսական վնասներ կբերեր հայերին կրոնափոխության բռնադատել շարունակելը։ Երեք հնարաշավ առավելագույն շահերի «եռկրաչափական տեղը»՝ ԻՐ ՆՇԱՆԱԲԱՆՆ ԵՂԱՎ՝ «Ո՛Չ ԿՐՈՆԱՓՈԽՈՒՄ, Ո՛Չ ԳԱՂԹՈՒՄ. Ո՛Չ ՀԵՍՏՈՒՄ»—ԱՄԵՆԱՇՆԱՀԱՎՈՐ ՈՒՂԵԳԻԾԸ, թե՛ Իրանի, թե՛ հայ ժողովրդի և թե իրեն իսկ համար, ա՞յնքան այդ շահերը միաձուլված էին այդ պահին։

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ կողմնակից հոգևին մաշտոցյան Վասակ մարզպանը «յառաջիմաց, խորհրդական, իմաստուն, հանճարեղ» (Կորյունի վկայությամբ) ՍԱՍԱՆՅԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ պատգամավորների միջոցով (161) ՏԱՐՀԱՄՈՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ անշուշտ օգտագործեց Անգղ գյուղում մոգերի ձախողանքը հայ ժողովրդի ձեռքով, նաև Զրադաշտական կրոնի երկրաչիեությանը էական բարի սկզբունքը՝ բյուզանդամետության ուժեղացումը, ընտանիքով դեպի Բյուզանդիա մեկնած սպարապետ Վարդանի վերադարձը իր՝ Վասակի ջանքերի շնորհիվ. չէ՞ որ ուրիշները կարող էին նրա օրինակին հետևել նույնիսկ իրենց զինականներով (և, ով գիտի, հետագայում պարսից թշնամու հետ զինակցել), և տիրապետող Պարսկաստանին պարտավորարար տրվելիք հարկն ու զորքը նվազեցնել այդպիսով[12]։ Նաև Հազկերտի «արևելքի պատերազմից

---

10 Նշելի է թե Հայաստանում մոգերի առաջին ձեռնարկի ձախողումից հետո (Անգղ), մտադրված մոգպետը Վասակին ասեց. «Եթե անգեն մարդիկ այդպիսի դիմադրություն դրսևորեցին, ապա ո՞վ կարող է դրանց հանդուգն հարձակմանց դեմ կենալ, եթե հանկարծ զինվորներն էլ իրենց միացնեն։ ...Դու իմաստությամբ շարեցիր այս։ Այլապես՝ հայտնի է լինում թե դու էլ նրանց միաբան ես, և քո խորհրդով է որ այս անցքերը բերին իմ և զորքի գլխին»։ (Իմ թրգմ. Վ.)։

11 Այս տեսակետի առթիվ՝ տիպիկ դաշնակցական արկածամոլության արտահայտիչ է Հ. Մանտալյանի պնդումը, թե «Վասակ պետք էր կռվեր պարսիկների դեմ... անգամ եթե արդյունքը լիներ բնաջնջումը» («Հայրենիք» ամսագիր, 1952, օգոստոս, 62)։ Հիշել թե հնդիկ մեծ առաջնորդը Մ. Գանդին մի քանի հարյուր միլիոնանոց իր ժողովրդին իսկ տանում էր լոկ կրավորակա՛ն դիմադրության։

12 Հիշել, թե Հայաստանի բաժանումից հետո, բյուզանդապատկան Հայաստան մեկնած Արշակ 3-րդին ընկերացող նախարարների կազմը շատ դժգոհացրեց Շապուհ 3-րդին, որ նրանց ետ կանչեց, ապահովություն խոստանալով հանուն սրբազան կրակի ու ջրի։ Արդարև շատերը վերադարձան երկու հաջորդական խմբերով, և նորեն տիրացան իրենց կալվածներին և իշխա-

կորագլուխ» վերադարձը, և «անաջողության ամբողջ մեղքը խորհրդակիցների վրա գցելը (161). լավ առիթ էր։ Հավանաբար հիշեցրեց նաև մի նախընթաց—Վռամ Ե. Ներսել էր հայոց ութ տարվա հակապարսիկ գործերը 415—422 թթ. (Խոր., Գ, ծը)։

Վասակի համոզիչ և պարսից վստահություն ներշնչող մեկ փաստն էլ սա էր. երբ Վարգան աղվանից օգնության գնացած էր, Վասակը և ուրիշ օրինապահներ երկրի կենտրոնում բերդեր, գրավեցին, և վստահելի բերդակալների հանձնեցին, ինչպես Ներսեհում կտեսնենք, (առանց ավելորդելու, հակառակ Եղիշէի ասածին)։

Սրանք և ուրիշ հանգամանքներ օգտագործելով՝ կարողացավ հալածանքը թուլացնել, և կրոնի ազատության խոստում ստանալ։ Այս իրողության է, որ անշուշտ, ակնարկում Եղիշեի այս տողերը,— վերոհիշյալ ռազմական ձախողանքից հետո «մարեց նրա (Հազկերտի) բոցավառ բորբոքումը, փակվեց չար խրատատուների բերանը... ...խոնարհվեց իր բարձր հպարտությունից, և վայրենացած սիրտը մարդկային բնության փոխարկեց... հասկացավ որ չի կարող կատարել» իր ամեն կամեցածները, ուստի «դադարեց այն հանդուգն հարձակումից, և վերջ տվեց մոլեգնոտ գոռում-գոչումին» (161)։

Եվ այլևս Վասակ իբր թե «...սուտ քահանաների ձեռքով խաբում ու մոլորեցնում էր...» Իրեն ...աստվածապաշտների կարգն էր դասում, իրեն ավելի՛ հաստատուն էր ցույց տալիս... Երդվում էր... և ցույց էր տալիս արմունիից ստացած բողության բոլոր նշանները» (Փարպ., Բ, լդ, Եղիշե, 170—1, 180)։ Առնվազն պարզ է, թե Վասակը եկեղեցի չէր քանդում, «...տարել է նաև եկեղեցու սեղանի սուրբ անոթները» վկայում է Եղիշեն (158)։ Իր նպատակն էր, որպես մարդպան, գրգռիչ ու հեստամիտ կրոնորյարին զսպել բանտարկելով (158)։

Անիմաստ է Եղիշեի և Փարպեցու «սուտ» ճամարելը Վասակի ճավաստումները։ Աշխարհում ամեն հավաստման դեմ «սուտ» համարելով առանց ապացուցելու առարկելը շատ հեշտ է։ Սակայն համոզիչ փաստեր կան.— Ա. երկու հեղինակներն էլ այլևս չեն հիշում եկեղեցի փակելու կամ ժամերգություն խափանելու և բռնի ուրացնելու որևէ դեպք։ Եթե այդպիսին պատահած լիներ, երկու հեղինակները բարձրաբարբառ կնկարագրեին չափազանցումներով։ Միայն հնստել համառողները կարող էին մեկուսի մնալ, անչատվել։ Բայց սրանք կարող էին համոզվել պարզ փորձով—կամ անձամբ եկեղեցի հաճախելով, և կամ ժամվորները դիտելով։ Արտագաղթած Վարդանը որ վերադարձվելուց հետո դեռ չէր համարձակվում եկեղեցի գնալ, (Փրպ., Ը, լա), հիմա այլևս կարող էր։ Կարող էին նաև պատգամավոր ուղարկել Տիզբոն և ստուգել ներողադրի սուտ կամ անսուտ լինելը, ինչպես որ ներողագրից առաջ (171) մի գերված պարսիկի ուղարկած էին (160)։ Բայց հեստականները ՊԵՏՔ էր վստահեին մարզպան Վասակի ճավաստած ներման հրովարտակին, ինչպես որ Սյունիը ասասպեցնելիս վստահ էին. թե կրմազուսպ ու հետեղական վարչազետ մարզպանը չէր սպանի որպես պապանդ ձերբակալած Մամիկոնյան, Կամսարական և այլ տոհմերին (Փրպ., Բ, խբ. Եղիշե, 160)։

Իսկ որո՞նք էին սերողագրին չհավատացող կամ հավատալ չուզողները. ա. Նրանք, որոնք մոգեր ջարդած և ատրուշաններ քանդած էին։ բ. Նրանք, որոնք նախկին Արշակունյաց, իսկ այժմ Սասանյան դահին պատկանող հողերը գրաված էին և չէին ուզում հանձնել. Վարդանը Ավարայրի կռվի նախօրյակին «դեռ գրաված էր պահում թագավորանիստ տեղերը» իրեն կողմնակից «նախարարների հետ միասին», (175)։ գ. Նրանք, որոնք ծանր վարկաբեկում և խոշոր տնտեսական վնաս էին համարում գերագույն դատավորի պաշտոնը հայրապետից մոգպետի հանձնելը, հազարապետությունն էլ պարսիկի և եկեղեցու և կրոնորյարի հարկաղերծության[13] վերջ տալը (114—115)։ Դրանք էին Հովսեփ հայրապետը, նախկին հազարապետ Վահան Ամատունին և Ղևոնդ Երեցն իրենց կողմնակիցներով։ դ. Վասակ մարզպանի դեմ ոխացող-մխացող

նությանը։ (Խոր., Գ, խբ-խը)։ Ի դեպ՝ խիստ հավանորեն սրանցից էին Արշակ 3-րդի զոհված սպարապետ (Վասակի երեց եղբայր) Դարայի երկու որդիները, որոնց Վասակ հետո վտարեց. (172)։ Երևի սրանք էին հետո արսորված Բարշեն ու Բակուրը. (Ալիշան, «Սիսական» 549)։ Հարկ չէ, որ Եղիշեի «եղբորորդիք» ասածը հորեղբորորդիք հասկանվի. (Ե. Տ.-Մ.—ծանոթ. 154)։

13 Բայց կղերը, եթե ավետարանական պարզակեցության սկզբունքին հետևողական մնար, պետք էր իր տնտեսական շահերին ու աշխարհիկ փառք ու պերճանքին գերադասեր 45 տարվա մաշտոցակնիք հայ ժողովրդի աղետազերծությունը, և այդ արդյունքով իսկ իր ունենալիք հոգեկան գոհունակությունը, և իր վարկի բարձրացումը հայ ժողովրդի աչքին։

ու դավադրող Վ. Ամատունին։ Ե. Որոշ խառնվածք. հոգեվիճակ ունեցողներ—անբուժելի հիվանդ և կյանքից ձանձրացած Ղեոնդ երեցը (232—4), և դառնացած Վարդան սպարապետը, որի մասին ընորոշ է իր պատասխանը իրեն արտագաղթից նտ հրավիրող վեց պատգամավորներին.— «...մեր նախնիների հանդեպ ձեր մշտապես արած նենգավոր խաբեությունից է որ անձնապուրծ հեռացանք. ինչպես որ դուք միշտ մեզ դեպի նեղը մղելով ձեր անձերը հեռու պահած եք, և միայն մեր ցեղը կրած է մեծ վշտեր ու մահեր...»։ (Թրգմ. և ընդգծում՝ իմ։ Վ.)։ Փարպ., Բ, լա.։

Բայց Վարդանի այդ վերագրումը ենթակայական է թվում. նախ քան այդ պատմությունը հիշում է միայն երեք զոհված Մամիկոնյան սպարապետ—Վաչեին (խոսրով Բ-ի օրոք), որը Վրթանես հայրապետը տոնելի սուրբերի կարգը դասեց, (ինչ. որ, սակայն, չտեսեցրին Մամիկոնյանց խնամի Ներսես և Սահակ Պարթև հայրապետները), Վասակին (Արշակ Բ-ի օրոք), և Մուշեղին (Պապի օրոք)։

Իսկ հակադարձովի էլ հիշելի են երեք նման պայրագա Վարդան Ա-ի (Ներսես Պարթևի աներոջ) կողմից Գնել Արշակունու սպանումը (Փառանձեմի էրկան), նույն Վարդան Ա-ի սպանվելը իր եղբայր Վասակ սպարապետից, և ուրացյալ Վահան Մամիկոնյանի (Շապուհ Բ-ի փեսայի) բազմաթիվ հակահայ քանդումներն ու ոպանությունները (Մերուժան Արծրունուն ընկերակցելով), և ապա սպանվելը իր որդի՝ Սամվելից։ Հիշելի է նաև բյուզանդամետությունից հրաժարած Վարազդատ արքայի կասկածը, թե Մուշեղ սպարապետ դավակից եղած էր նույնպես բյուզանդամետությունից հրաժարած Պապ արքայի սպանմանը բյուզ. զորականների ձեռքով։ Զմոռանանք նաև Վարազդատ արքայի Հայաստանից հալածվելը Մանվել Մամիկոնյանի կողմից։ Նաև բյուզանդական զորապետ Վասակ Մամիկոնյանի համամիտ լինելը Վասակ Մարզպանի մոդուսական ուղղությանը, ընդդեմ հեստականներին։

Հեստականներին Տիզբոնը կարող էր պատասխանել այսպես.—«Երկու երրորդ դար է, որ ձեզ խաղաղություն պատճառեցինք (միթե առաջ ունեցե՞լ էիք այդպիսին). բարգավաճեցիք, գիր-գրականություն ունեցաք. այլևս չունեցաք պայքարներ ու կռիվներ Արշակունի արքայի և նախարարի միջև. նույն արքայի ու հայրապետի միջև, նախարարի և նախարարի միջև. նախարարի և հայրապետի միջև. հայ արքայի և հարևան պետության միջև։ Այդպիսով կռիվների պատճառելիք մեծամեծ ծախսերից և ավերումներից զերծ մնացիր. որով՝ տնտեսապես շատ շահեցիք. ուստի վճարեցե՛ք՝ մասնակցեցե՛ք պետական պաշտպանության մեր ընդհանուր ծախքերին. (չէ՞ որ, օրինակ, Ճորա պահակի դրունքը ամուր պահելու և պաշտպանելու համար հյուսիսաբնակ արշավողների դեմ՝ մենք նույնիսկ Բյուզանդական կայսրությունից էլ պահանջում ենք, անգամ զենքի ուժով, ծախքերին մասնակցել)։ Իսկ հայրապետը հիմա այլևս առիթ ու պետք չունի վերոհիշյալ վեճերին ու պայքարներին միջամտելու, քանի որ Արշակունի գահ չկա այլևս. (հիշել Հուսիկ և Ներսես հայրապետների պայքարը Արշակունի արքաների դեմ)։

Ձեզ մնում է հանդարտ մնալ. քաղաքական դժվարություններ չպատճառել մեզ, և ներքնապես շարունակել ձեր մաշտոցյան առաջադիմության գիծը մեր ապահոված խաղաղության հովանու տակ»։

Եվ սակայն ներողագիրը սուտ համարելու համառողները հախուռնորեն անտեսելով՝ փոքրագույն չարիքը հանձն առնելու միջոցով մեծագույնից խուսափելու համամարդկային սկզբունքը և քրիստոնեական խոնարհամտությունն ու խաղաղասիրությունը, ծանրածանր աղետներ բերին, թե՛ հայ ժողովրդի գլխին և թե՛ իրենց։

Դառնանք ներողագրի անսուտ լինելուն.

Բ. Թե բողության արմունական ճրամասները սավատի էին՝ հայտնի է նաև նրանով, որ Արտաշատի ժողովի տասնութ եպիսկոպոսներից, (որ Պարսից արքունիքից կրոնական ազատություն էին պահանջում կյանքի գնով իսկ) միայն երկուսը ներկու եղան Ավստրայի «ճակատամարտ»-ում. Հովսեփ հայրապետ և Սահակ եպս. Ռշտունյաց։ Այդ նշանակում է, թե մյուս 16-ը ճավատացին կրոնական ճնշման վերացմանը. նրանց այդ բացակայությունը Արտազում՝ չենք կարող վախկոտության վերագրել. ոչ էլ դյուրախաբության. այդ կլիներ չափազանց թերագնահատում Մաշտոցյան հոգեսերնդին, և քառս կառաջացներ 5-րդ դարի ազգային-մշակութային շարժման մեր ողջ պատմության մեջ։ Բացակա 16-ն էլ այնքան արթնամիտ ու դժվարախաբ էին, և այնքան հոժար էին իրենց վիզը սրի տակ դնելու ի սեր կրոնական ազատության, որքան մյուս երկուսը (որ ներկա եղան Արտազում, թեև չզոհվելով) և ասուր քո և պարանոց մերդ ստորագրելու։ Նրանք համոզված էին ներողագրի անսուտ լինելուն. որով՝ շարժումը հեստման հասցնելու

պատճառ ու կարիք չէր մնացած. այսինքն՝ թեև շարժման սկզբնակա՛ն առիթը կրոնական էր (Մոգերի վրա հարձակումը Անգղում), բայց ասյուսամբուրյա՛ն շարժառիթը այլևս կրոնական չէր։ Այդ 16-ի մեջ էին նույնիսկ Մամիկոնյան երկու կալվածների եպիսկոպոսները՝ Սահակ (Տարոնի) և Տաճատ (Տայքի), փոխանակ բանակ գնալով գոնե Մամիկոնյան գնդին ոգևորելու, և այդպիսով իրենց իշխան Վարդան Մամիկոնյանին գործակցելու, օգնելու։ Գ. Ավարայր չգնաց նաև նույն Արտաշատի ժողովի մասնակից Աղան Արծրունի երեցը՝ (Փրպ., Բ., իգ) Վարդանի Հմայակ եղբոր աներորդին և պատմիչ Ղազար Փարպեցու ուսուցիչը (և անշուշտ նրա մեկ գլխավոր բերանացի աղբյուրը)։

Դ. Այստեղ նկատարժան է, որ կայսեր ուղարկված երեք պատգամավորներից (ըստ Փարպեցու) միայն վասակատյաց Վահան Ամատունին է, որ վերադարձած ներկա է լինում (ըստ Եղիշեի) Ավարայրում, իսկ Հմայակը և սրա մյուս աներորդի Մերուժան Արծրունին չկան Ավարայրում. ինչո՞վ բացատրել այս կասկածելի պարագան։ Անշուշտ հեստումը այլևս անտեղի ու վնասակար համարեցին[14]։

Ե. Նաև՝ Աբրահամ Խոստովանողը (հայամայր ասորի Մարութայի «Վկայք Արևելից»-ը ոսկեղենիկ լեզվով թարգմանողը) Իրանում շարչարվելուց և 12 տարի Ասորեստան աքսորված մնալուց հետո երբ վերադարձավ, փոխանակ իր ծննդավայրում՝ Մամիկոնյանց կալված Տայքում մնալու, եպիսկոպոս ձեռնադրվեց Բզնունյաց գավառի, որ վաղուց Ալբիանոսյանների վիճակն էր, որոնք հայրապետական աթոռին հետամուտ մրցակից տոհմ էին (հին քրմական՝ բնիկ գծով), ընդդեմ Պարթև (Լուսավորչյան) հայրապետերին (Մ. Օրմանյան, «Ազգապատում» Ա, 304)։ Անշուշտ պատճառ ուներ Աբր. Խոստովանող իր ճգնողական կյանքը իր ծննդավայր Տայքում չվարելու։

Զ. Հրովարտակներին հավատացին նույնիսկ Ի-յուզանդիոնի «սուրբ» եպսկ.-ները և այլևս սառեցին. և այնտեղ ամբողջ ավագանու մեջ էլ կասկած ընկավ եկեղեցու ուխտի հանդեպ (170)։

Այդ պատմորոշ դարձակետը խորհրդածելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, թե երկընտրանքը բացարձակորեն այլամերժ է.— կամ երկուսն էին իրավացի և հետևողական, և կամ 16-ը. միջին դիրք չկա այդ երկընտրանքում. ոչ էլ կարելի է մեկ կողմին հավանել և մյուս կողմի մասին լռել, անտեսել։ Դուսպես ընտրել մեկ կողմին՝ նշանակում է անպայման դատապարտել մյուսին։

Հիմա հեստականները մեղանչում էին հետևյալների դեմ.— ա. Արտաշատի ժողովի դեմ, ուր բանաձևված պատասխանում լիովին հավատած էին իրենց հավատարիմ հպատակությունը Իրանին, ազատակրոնության բացարձակ պայմանով (127)։ Իմաստուն վարչագետ Վասակը Տիզբոնին տարհամոզելով այժմ ընդունել տված էր այդ պայմանը, և նախորդ մոդուսը վերականգնել տված։ Որով՝ շարժման պատճառը վերացված էր, ուստի շարժումն էլ պետք էր վերացվեր դադարեցվեր։

բ. Տիզբոն կանչված տասը ավագ նախարարները, նախքան Հայաստանից մեկնելը, խորհրդակցելով լավագույն համարած էին երթալը, քանզի չերթալը հեստում կհամարվեր, (Փրպ., Բ, իե)։

գ. Տիզբոն հասնելուց հետո էլ սպառնալիքի տակ կրոնափոխման պարտադրված տասը նախարարները հեստում չորոշեցին, այլ հաստատ մնալ իրենց առաջվա մտադրության վրա, որ էր Արտաշատի ժողովի որոշումը (135), ծրագրելով նույնիսկ օտար երկիր երթալը, քանի որ ընդդիմանալով կորստյան պատճառ կլինեին «անթիվ բազմության» (Փարպ., Բ, իէ)։

դ. Հեստումով գործած կլինեին նաև Ավետարանների դեմ.— «Պատերազմի գնացող որ արքան նախ չի հաշվի թե ինքը 10.000-ով կարո՞ղ է դիմադրել 20.000-ով հարձակողին. եթե չէ՝ դեռ հեռվից պատգամավորներ ուղարկելով խաղաղություն կխնդրի» (Ղուկասու ԺԴ, 32)[15]։ Իսկ հեստականները գիտեին իրենց սակավությունը (154)։

Երեք Ավետարաններում ասված է նաև, թե ինչ իր դեմ բաժանված պետությունը, նույնիսկ

---

14 Տիզբոնի բուն մտահոգությունը պարզ երևում է Հազկերտի հետևյալ խոսքերից. «...ձեր կրոնը... պահեցեք ...միայն թե մեկ հպատակվելուց դուրս մի գաք. (Ծղ. 3-րդ գլխի վերջերում)։ «Արքան քրիստոնեությունը թուլատրեց. մոգերի կոտորածի վնասը չի փնտրի. հեստումը չի հիշի անգամ, միայն թե նա դարձնեք Վարդանի խրատից ու խոսքերից, և մի կորնչիք նրա հետ. (Փրպ., Բ, լզ)։

15 Տարագաշյան, Դ, 143։

Նատանան, չեն կարող կանգուն մնալ[16]։ Այս ավետարանական ճշմարտությունների օրինակները անշուշտ շատ լավ գիտեին Հովսեփ Հայրապետը, Սահակ եպսկ.-ը, Ղևոնդ Երեցը և այլն, և սակայն դաս չառին դրանցից, և անտեղիտալիորեն համառեցին ցվերջ, իրենք պառակտվողները, և հուսկ գահավիժողները։

ե. Հետել համառողները գործեցին նաև ամբողջ հայ ժողովրդի գերագույն շահերի դեմ, որ բացարձակապես հակառակ էր պարսիկ բանակի Հայաստան մուտքին։

Ահա այդ հինգի դեմ անհավատարիմ դտնվեցին Արտաշատի ժողովի 18 Եպսկ.-ներից 2-ը, իսկ հավատարիմ գտնվեցին 16-ը, մոդուսականների (Վասակյանների) հետ միասին։

14. Նույնիսկ հակավասակյաններն էլ ներքնապես բարձր համարում ու վստահություն ունեին Վասակ մարզպանի վարչական ուղղամտության և հետևողականության վրա. չէ՞ որ երբ նյունիքում ավերում, սովահարում, գերում, տարագրում կատարում ու տղաներ սպանում էին (160), չվախեցան թե մարզպանը կսպանի իր ձերբակալած Մամիկոնյան, Կամսարական և այլ տոհմիկ տղաներին (Փրպ. Բ. խբ.)։ Վասակի այդ վարմունքը առաքինություն է, և ոչ միայն օրինականություն ու վարչագիտական հեռատեսություն, մանավանդ որ, ինչպես տեսանք, ինք որպես մարզպան-փոխարքա՝ իրավասու էր մահապատիժ էլ տալու (Միք. Փորթուգալ, 281)։ Երկայնամիտ ու խոհական մարզպանը ոչ միայն չշարաչահեց այդ, այլև չկիրառեց չգտագործեց, ու միայն համոզիչ, և այս անօգուտ լինելու պարագային՝ զսպիչ միջոցներ գործածեց, մինչև Արտազում անգամ։ Մարդկային կյանքի անձեռնմխելիության իր այդ սկզբունքը ապացույց է իր անշեղ ու բարձր մարդկայնականության։

15. Մաշտոցակնիք հայ ժողովրդի մասին իր խորունկ հոգացողության մի ցայտուն ապացույցն է նրան վտանգելուց խուսափելը որդեսիրաբար խիզախելիս, երբ ինք իրե՛ն էր, որ վտանգեց մի հանդուգն հերոսական անձնվիրությամբ.—Տիգրոնում իր երկու պատանդ որդիների կյանքը ապահովելու նպատակով նա չքաշվեց սպառնալ գոռ Հազկերտ արքայից արքային իսկ, որպես հավասար հավասար. Հայաստանում մի շարք պարսիկներ ձերբակալեց որպես փոխադարձ պատանդ, ասել ուզելով Հազկերտին. «Եթե սպանես՝ ես էլ կսպանեմ. եթե չարչարես՝ ես էլ կչարչարեմ»։ Հազկերտն, անշուշտ, պիտի չուզեր իր դեմ գրգռել այդ պատանդ պարսիկների ազգականներին ու բարեկամներին։ Վասակի որդնվիրության այս հանդուգն քայլը արժանի նյութ է մի հոյակապ դյուցազներգի, մինչդեռ՝ Ռվարայրից փախած (առանց իսկ Վարդանի դիակն ազատելու) սրա փեսա Արշավիր Կամսարականն այդ որդեսիրական հուսահատական խիզախության արարքը որպես պետական հանցանք ներկայացնելու աստիճանին իջնում է. միթե ինք էլ հայր չէ՞ր երեք որդիների, (որոնք մի սերունդ հետո Վահան Մամիկոնյանի բարեհաջող հետամանը գործակից եղան)։

16. Եղիշեն չափազանց սև գույներով պարսավում է մարզպան Վասակի բռնած ուղղությունն ու արարքները, բայց որևէ դատապարտող բառ չունի նրան, նրա ուղղությանն ու արարքների գործակիցներին դեմ (169)։ Նշանակում է սրանց գործակից Վասակն էլ պարսավելի չէ, իր ուղղությամբն ու արարքներով։

17. Իրերանախանձ հայ նախարարները, որոնք հայ Արշակունի գահի շուրջ կենտրոնացմանը չէին հանդուրժած, և այն վերջացրած էին արքայից արքայի ձեռքով (428 թ.), շատ բնական էր, որ անտարբեր, նույնիսկ չարախինդ նայեին իրենց գերիշխող հայ մարզպանի դժվարությանց վրա, առնվազն «իմ ի՞նչ գործն է,—ասելով,—իշխանությունը իր ձեռքն է, ինչպես ուզում ու կարող է՝ թող կարգադրի. մե՞զ ինչ»։ Եվ սակայն մի վերահաս ամենահար մեծ վտանգ մաշտոցակնիք հայության գլխին՝ առժամապես լռեցրեց այդ դարավոր այլամերժ տրամագրությունը. դա պարսիկ բանակի Հայաստան մտնելու ագետալի սպառնալիքն էր, որը խափանելու հոգն ունեին հայ մարզպանից ու ավագ նախարարներից սկսած մինչև ռամիկն ու շինականը։ Ուրիշ գիծ չէր էլ կարող ունենալ 45 տարի մաշտոցյանությամբ կոփված ու կոփած Վասակը։

Եվ ո՞ր նախարարն էր որ, մրցակից ու նախանձոտ՝ դարերև ի վեր, պիտի ուզեր գործիք դառնալ Վասակին, եթե սա Եսամոլական գծում շահեր էր հետապնդում։ Վասակին գործակից

---

16 Մ ա տ թ է ո ս, ԺԲ, 25—26։ Մ ա ր կ ո ս Գ. 23—26։ Ղ ու կ ա ս ԺԱ. 17—18։

17 Այդ ցույց է տալիս նաև, թե նա չիջավ իրերամարտ նախարարաց ճղճիմ գործարքներին, չանճիտեց հետականներին, (ինչպես այդ փորձած էին, օրինակ՝ Մանավազյան և Որդունի նախարարները։ Խոր. բ.), այլ միշտ մնաց պետականության բարձր տեսակետին՝ Հայաստանի կենտրոնացյալ իշխանությանը՝ հայ մարզպանի, իրեն՝ Վասակի ձեռքում։

դառնալիս՝ միայն մեկ բան կարողացած էր նրանց մտահոգել—ընդհանուր մեծ վտանգը՝ պարսիկ բանակի Հայաստան մտնելու դժխեմ ու սարսռազդեցիկ հեռանկարը, մաշտոցականիք հայ ժողովրդի խաղաղ ու բարօր կեցության փլուզումը. (Հ. Արմեն, 41)։

Մեր դժբախտ պատմությունը հետագայի մի դժբախտ դրվագ է տալիս, որ լիովին արդարացնում է մողուսականների ուժեղ և կանխարգելիչ զգուշավորությունը։ Դա 120 տարի հետո Վարդան Գ Մամիկոնյանի հեստումն է Իրանի «Խաղաղասեր և աշխարհաշեն» (Սեբեոս, Է.) զահակալ Խոսրով Ա Անուշիրվանի օրով, երբ Վարդան Գ և գործակիցները «սպանեալ զՍուրէն մարզպան յանկարծաւրէն ի Դուին քաղաքի՝ առին զաւար բազում և գնացին ի ծառայութիւն Յունաց» (Սեբեոս, Զ)։ Զայրացավ Խոսրով Ա արքան. «Հայր էի ամենայն երկրի, և ոչ տէր, և սնուցեալ զամենեսեան իբրև որդի և սիրելի» ասաց (Սեբեոս, Է)։ «Այնուհետև բռնկեց նոր պատերազմ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որը տևեց ընդհատումներով 20 տարի, և որի ընթացքում ապստամբ նախարարների երկրամասերն ենթարկվեցին ավերածության» (Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Բ, 2-րդ մասի նյութեր, 16)։ Ստ. Ասողիկ նկարագրում է այսպես. «Եւ այս են ժամանակք մարտից, երկպառակութեանց. անթիւ սպանմանց, գերութեան, առից, խողոմից, կապանաց, նեղութեանց, պակասութեանց, խիստ սովու, սրոյ և մարդամահու, աւերելոյ աւանից, հրդեհից շինուածոց և ամենայն վնասուց բազում աշխարհաց յերկուց կողմանց հասանէր...։ («...Պատմութիւն Տիեզերական» 85, Ս. Պ.-գ. 1885)։ «...Հայաստանի բոլոր կողմերն էին ենթարկված պատերազմի սարսափներին... մասնավորապես ...հարավային նահանգները.. Աղձնիքի ...Արզն գավառը... ավերակների վերածվեց... հոռոմների հափշտակություններից ու կեղեքումներից։ ...Ամբողջ երկիրը ավերակների կույտեր էր... պարսկա-բյուզանդական պատերազմների ընթացքում», որոնք «շարունակվում էին համառությամբ...։ Պարսկական Հայաստանը ընդհանուր առմամբ գրավված էր մնում բյուզանդական զորքերով» (Լեո, «Հայոց պատմ.», Բ, 215—6)։ Այդ բոլոր աղետները հասցվում էին երկու կողմերից էլ, 20 երկար տարիներ, ընդհատումներով։ Ի՞նչ կլիներ հետևանքը 451 թ. հեստման, երբ բյուզանդական բանակ էլ չկար հայերին օգնող, և Հազկերտ Բ էլ շա՛տ հեռու էր Խոսրով Ա-ի մարդկայնական բարեմասնություններն ունենալուց—լայնամտություն, արդարամտություն, քրիստոնեասիրություն և այլն։

«Հայ իշխանները, և մանավանդ երկրի կառավարիչ Վասակը քաղաքական դատողություն ունեին, և հասկանում էին թե հնար չէ ուժեղ պետության հետ ուժով չափվելը» (Ն. Ագոնց, 0123)։

Վասակ մարզպանի վարչագիտական հանճարն էր, որ հեստումը, եթե չկարողացավ արգելել, գեթ փոքր թվի մեջ սահմանափակեց. որպես մի քանի համառ կրոնավորների կողմից դրդված։ Հետևաբար «Ակներև է, որ պարսիկները (ոտքի ելած) հայերի վրա նայեցին որպես խողոմարարների, որոնց պետք էր ջրվել. և ոչ թե կոտորել որպես թշնամու» (Ն. Ագոնց, 0125)։ Նոր մարզպան Ատրորմիդի գալուստով՝ Մուշկան Նյուսալավուրտ զորավարը «մնացած բոլոր զորքերի հետ» Հայաստանից հեռացվեց (Եղիշե, 199), ինչպես անձկալից փափագն էր մողուսականների և բոլոր հայոց։

Թե Ավարայրից փախած, ապա հանձնված, սաքսորված ու 13 տարի հետո վերադարձած նախարարները Էրբևիցե խոստովանեցա՞ն հեստման անտեղի և բազմավնաս եղած լինելու մասին՝ նույնիսկ ավելի արժանահավատ Փարպեցին էլ չի գրում, թեև դեպքերի մանրամասներ լսած էր նրանցից մեկի՝ Վարդանի փեսա (և Վասակին գլխավոր ամբաստանող) Արշավիր Կամսարականի բերանից։

Միայն Վարդանն է, որ նախորդ բռնանալու դիրքից (Վասակից գաղտնի ժողովում տարակարծիք Զանդաղանին սպանելը, մարզպանից բռնի խոստում խլելը, Սյունիքն ասպատակելը, անպատրաստ ռամիկին ու շինականին բռնի Ավարայր քշելը) հրաժարված է, նա վերջապահ եղբորը՝ Համազասպյանին պատվիրեց «մի զոք բռնադատել. յորդորել միայն բանիւք...» (Փրպ., Բ, լթ.)։ Բայց մեր այդ նախարարներից. ըստ Եղիշեի (252), ավելի՛ խոնարհամիտ է դուրս եկել մեծ հազարապետը (Միհրներսեհ), որ ինն ու կես տարի հետո բանտը այցելելով, արքայի կողմից նրանց առաջարկել է ուրանալ ու ազատվելով վերադառնալ հայրենիք, (ինչ որ նրանք առաջինաբար մերժեցին), և խոսակցելիս հայտնել է թե «ինքը հենց իրեն էր համարում Հայոց աշխարհի ավերման պատճառը, ուստի և մեծ անարգանքով իր տունն ուղարկվեց»։

Այդ նշանակում է թե մեղավոր էր նաև իր մտերիմ խորհրդական Վարազ-Վաղանը. որից ինքը խարված էր, և, որի միակ «առավելությունը» մնացած էր իր անհատական ուրացումը։

Այդ նշանակում է նաև թե մազդեզացում առաջարկող հրովարտակը մի մեծ սխալ էր եղել, Հազկերտի, Միհրներսեհի և մոգերի կողմից։ Ավելին. այդ նշանակում է նաև թե՝ կա՛մ Վասակի դատը երկու մամիկոնասեռ գրողների դրածից տարբեր է ընթացել[18], (մանավանդ որ հեստածները ամեն պատասխանատվություն Վասակին բառնալով հանդերձ չազատվեցին, այլ պատժվեցին արսորով ու բանտով), և կամ, որ ավելի հավանական է, հետո, պաշտոնանկ մարզպանը իր կյանքի վերջին տարիները Իրանում վար դրվելիս՝ հնարը գտած է իր պարսիկ ծանոթների (թերևս նախկին շահակիցների) միջոցով բուն իրողությունը հասկացնել Հազկերտին ու ավագանուն,—1. բացատրելով Վարազ-Վաղան փեսայի դրդոչությունը Միհրներսեհի մոտ. 2. Հայաստանում էլ պաշտոնազրկված հազարապետ և իրեն թշնամի Վահան Ամատունու դրդելը զգայուն Վարդան սպարապետին. 3. անբուժելի հիվանդ և կյանքից ձանձրացած Ղևոնդ երեցի (231—234) ջղայնոտ հախուռնությամբ կատարած մոլեռանդ քարոզչությունն ու գրգռությունը, և այլ հարակից պարագաներ։

Միհրներսեհի խոստովանությամբ որոշ չափով անպարտ դուրս եկած Վասակը, սակայն, իր կորովի, հաստատակամ, խրոխտ ու չքծնող նկարագրի պատճառով, հասկանալի է, որ այլևս Տիզբոնի արքունիքի գործին չգար, և իրենից խլված դիրքին ու պաշտոնին չվերադարձվեր։ (Արդեն այդպես վարվել էին անցյալում՝ Արշակ Բ-ի, սպարապետ Վասակ Մամիկոնյանի և վերջին Արշակունի արքա Արտաշես Գ-ի հետ)։

18. Ապստամբների դեմ մարզպանի ի պաշտոնն ձեռնարկած միջոցառումների մասին խոսելիս՝ Բունդ վասակատյաց Եղիշեն նրան վերագրում է ավերում ու հրդեհում տասից ավելի մասնավոր վայրերի՝ շրջակայքի գյուղերով միասին, և երկու ամբո՛ղջ դավառների։ Դրանց անուններից երևում է, որ դրանք, Այրարատյան նահանգում գտնվելով, մարզպանի անմիջական իրավասության տակ էին, (ինչպես նախապես՝ Արշակունյաց), և ոչ թե Մամիկոնյանների կալված։ Բայց Փարպեցին դիտում է (161), թե հեստականները արդեն իրենք ավերած էին դրանք՝ ըստ Եղիշեի (150)։ Իսկ Փարպեցին, թեև Վարդանանց կողմնակից, բայց այստեղ չափազանցության չի դիմում, և պարզապես գրում է, թե «զբերդեան ամրոցացն Հայոց ի բաց կալան, և զիւրեանցն բերդակալս արարին զգուշացուցին». (հայոց ամրոցների բերդերը գրավեցին, և իրենցից նշանակելով բերդապահներ՝ պատվիրեցին լավ պահպանել։ (Փարպ., Բ, լզ)։ Այստեղ էլ խոսք չկա ավերելու մասին։ Բայց ինչպես վերը տեսանք, ուշագրավն այն է, որ երկու վասակատյացներն էլ չեն հիշում որևէ եկեղեցի Մանդում Վասակ Մարզպանի և իր կողմնակիցների ձեռքով։ Քանզի այդ հնարավոր էր ստուգե՞լ...

19. Սյունյաց պատմիչ Ստ. Օրբելյանը (13-րդ դար) Տաթևի մասին պատմում է, թե այն տեղում, բարձրագույն քարի վրա կար եկեղեցի, կարծր անտաշ կրաշաղախված քարերով... մինչև ս. Ներսեսի և Սահակի օրերից... Սյունիքի և Բաղքի միջև։ Եվ եպիսկոպոսները Սյունիքի իշխաններից խնդրելով այս տեղը՝ եկան և բնակեցին... այնտեղ դրին Բարգենյան... խաչը, որը Անդովկի որդի Բաբիկի որդի Վասակը արծաթե շինել տված էր մի մարդու հասակի չափով, («Պատմ. Նահանգին Սիսական»։ ԼԹ։ Թարգմ. Վ.)։ Այստեղ էլ «ուրացյալ Նենգավոր, մատնիչ, դավաճան»-ի կանգնած խոշոր արծաթե խաչը սերժելու կամ վերացնելու որևէ խոսք չկա։

20. Իր քառասնամյա (Սյունյաց) տանուտերության միջոցին՝ իր մաշտոցյան գործունեության արդյունքներն այնքան հաստատուն եղած էին, որ երբ իր անկումից հետո, ինչպես վերը տեսանք, այնտեղ տանուտեր դարձավ իր նենգագավ փեսա և Միհրներսեհի ու Հազկերտի դրդիչ դիվաբախ Վարազ-Վաղանը, և որ ամբողջ քառորդ դար բազում ատրուշաններ կառուցեց այնտեղ, նույնիսկ սրա տխրահռչակ վարչության միջոցին՝ 468 թ. Գյուտ հայրապետը և Սյունյաց Անանիա եպս-ը այնտեղ կառուցել տվեցին «վկայարան մեծ ...երկնանման... սքանչելի յօրինուածովք ...բազմամբոխ ժողովով» օծեցին, և ութ օր նավակատիք արեցին (Օրբ., ԺԹ)։

21. Փարպեցին նույնիսկ երբեք «ուրացող» չի կոչում Վասակին, այլ ընդհանրապես «նենգավոր»։ (Բնական է, որ անհամբեր հախուռնի դիմաց՝ իմաստուն նախատեսողը նենգավոր երևնա)։

22. Սյունյաց պատմիչ Ս. Օրբելյանը Վասակի համար մեղադրական տողեր ունի, հետևելով Եղիշեին և Փարպեցուն, սակայն վկայում է, թե «Վասակ էր շքեղ և բարձր ի մէջ աշխարհիս

---

18 Արդեն, ըստ Փարպեցու, Վասակին հայ գլխավոր ամբաստանողն էր Արշավիր Կամսարական, (Բ. խե.), իսկ ըստ Եղիշեի՝ Ատոմ Գնունի, (202)։

Հայոց». (Օրբ., ԺԷ)։ Իսկ այդ անհնար կլիներ մաշտոցյան ծավալուն գործունեության դաշտ դարձած Հայաստանում, եթե ինքը՝ Վասակը ուժեղ մաշտոցյան եղած չլիներ։ Բառասուն երկար տարիներ, ինչպես վկայում են Կորյունը, Խորենացին և Օրբելյանը[19]։

Վասակի մաշտոցյանությունն ապացուցող այսքան իրողությանց դիմաց հայհոյական դրպարտանքներ կդառնան երկու մատենագիրների հիշած բացարձակորեն բացասական վերագրումները հակառակ Կորյունի, թե՝ նրա դատվելու միջոցին «նրա ազգականները ցույց տվին և հայտնեցին թե ...մանկությունից ի վեր Իրբեք արդարությամբ չէր գործել (203—4). և թե «իր կյանքն իսկ շարունակ չարը հովանավորելու միտում էր» (Փարպ., Բ, լբ)։ Եվ լիովին իրավացի էր Վասակը երբ «իրեն... աստվածապաշտների կարգն էր դասում» (170—1)։

Վասակ Սյունու այդ երկարատև և հաստատուն մաշտոցյանությունը, անշուշտ, բնական արդյունք էր մի քանի ազդակների.—իր տոհմի ավանդությունը (հայրենապաշտպան պապը Անդովկ, հորաքույրը Փառանձեմ թագուհի, քեռայրը Արշակ 3-րդ արքա, երկրաշեն հայրը Բաբիկ, Մաշտոցի լուսավորչության հովանավոր դործակից հորեղբայրը Վաղինակ), նաև խորին ազդեցությունը Մաշտոցի, որ համեմատած այլ շրջանների՝ ամենաշատը Սյունիքում գործեց, և Երասխից հյուսիս գտնվող Գողթնը նրա «դաստակերտն» էր ըստ Կորյունի, ինչպես տեսանք. նաև իր դեռ պատանուց պատանդության փորձառությունն ի Տիզբոն, ուր իր խրոխտ իրավատյահանջության պատճառով տասնյակ տարի զրկվեց իր հայրենական ժառանգական իշխանությունից (Օրբ., ժդ)։ Այդ փորձառությունն էր, որ նրան համոզած էր, թե տվյալ ներքին ավատապետական, և արտաքին՝ քաղաքական պայմաններում՝ ՄԱՇՏՈՑՅԱՆՈՒԹՅՈՒՆՆ էր որևէ հակահայ ճնշման դեմ ամենազլխավոր հնարավոր պաշտպանողական ու հակազդողական հենարանը, պետությունազուրկ հայության պայմաններում, և ոչ թե ապարդյուն ու աղետավոր հեստումները, պատրվելով Բյուզանդիոնի կարծեցյալ օգնությամբ։

Եվ Վասակի իսկական մաշտոցյանի մնայունությունն ապացուցող այսքան փաստերից հետո միթե չափազանցա՞ծ կլիներք, եթե ասենք, թե զգալի չափով նաև իր հովանավորելուն ու գործակցելուն վերագրելի է իր 40 տարի կառավարած նահանգի՝ Սյունյաց նորահաստատ դպրոցի և սրա արձակած շառավիղների (դեպի Գուգարք, Ուտի, Վասպուրական, Այրարատ, Շիրակ), հետագա հազարամյա մշակութային գործունեությունը։ Սյունյաց դպրոցը շարունակ տվեց կորովի և լուսարձակ գործիչների հույլեր, ի ծառայություն հայ ինքնուրույն մշակույթի ամուր պահպանման, տևեցման ու ծաղկման, հակառակ՝ բազմապիսի և բազմաթիվ հարվածների և խոչընդոտների (արաբ, սելջուկ, մոնղոլ, պապական, թաթար և այլն)։ Սյունյաց դպրոցը այդ դժվարամատչելի լեռնաշխարհում հաջորդական լուսակենտրոններ ունեցավ Շաղատը, Տաթևը, Նորավանքը, Գլաձորը, և սատարեց հայ ժողովրդին՝ ուսումնական, ինքնուրույն և թարգմանական գրականության, գրչություն, գեղարվեստական, վարչական, դիվանագիտական, քաղաքական և այլ մարզերում, շնորհիվ մաշտոցյան լայնալիճ հեռաձիգ աղեղից դեպի ապագան արձակված նետին տրված վասակյան ուժգին թափի—դեպի անմահություն։ Բազմաթիվ են այդ բարեհիշատակ հույլերի անմոռանալի աստղերը,— Պետրոս Սյունեցին, Մովսես և Վրթանես Քերթողները, Հովհան Օձնեցին, Ստեփան Սյունեցին, Կոմիտաս և Մաշտոց հայրապետները, Վանական վ., Մխիթար Գոշը, Հովհ. Վանականը, Հովհ. Պատմ.աբանը, Վարդան Արևելցին. Կիր. Գանձակեցին, Ներսես Մշեցին, Նսայի Նշեցին, Հովհան Որոտնեցին, Մխիթար Սասնեցին, Հովհ. Երզնկացին, Խաչ. Կեչառեցին. Գր. Տաթևացին և այլն (Օրմանյան, «Ազգապատում», Ա, 791—800)։ Մանավանդ Արդ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի... Պատմ.» 79—259, 276—281)։ Սյունյաց դժվարամատույց լեռնաշխարհում Սյունյաց դպրոցի այդպիսի երկարատև բազմարդյունությունը անշուշտ արգասիքն էր Մաշտոցի կողմից լավ հաստատված, և Վասակի կողմից էլ լավ հովանավորված լինելուն, ըստ այն առածի, թե «գործը լավ սկսելը արդեն գործի կեսը կատարած ասել է»։ Մաշտոցը և Վասակը լավ և ամուր սկսած էին արդարև։

ՄԱՏՆԻՉ, ԴԱՎԱՃԱՆ ՉԷՐ կարող լինել Վասակի նման 40 տարվա մաշտոցյանը, թեև այդպես կոչելը սովորական է դարձած, հետևելով մանավանդ վասակատյաց Եղիշեի աշառամիտ տողերին։ Սակայն անհրաժեշտ և արդարացի է շմոռանալ ԵՐԵՔ ԻՐԱՎԱԲԱՆՈՐԵՆ ԿԱՐԵՎՈՐ ԿԵՏ.—1. Տիզբոնում նախարարները, խափանելու համար Հաղկերտի սպառնալիքների գործա-

19 Իրեպ՝ Օրբելյանն արդեն կասկածի տակ է առնում մամիկոնասեր երկու մատենագիրների պատմածները, երբ գրում է, թե «...զորպէսն... Աստուած միայն գիտէ, և ոչ այլ ոք» (Օրբ., ԺԷ)։

դրումը. ՄԻԱՍԻՆ պայմանավորված էին կեղծուրացությամբ իրենց կրոնի վրա հաստատ մնալ ու Հայաստան վերադառնալ, բայց ոչ թե հետևել։ Խնդիրն այն է, թե մինչև ե՞րբ էին երևույթները փրկելու՝ կեղծուրաց մնալով։ Եվ՝ Վասակ մարզպանից զաղտնի խորհրդակցություններ արին. (Փարպ.. Բ, լբ)։ Բայց պայմանավորվածությունը կարելի է բնկանել միայն բոլո՛ր պայմանակիցների հավանությամբ։ Վասակը, ըստ Գահնամակի առաջին դահն ունենալով, և մանավանդ, որպես Հազկերտ արքայի փոխարքա՝ մարզպան, ամենադիտավոր պատասխանատուն էր. ուստի ի՛նքը պետք է վարեր կացությունը հառաջիմաց, իմաստուն և հանճարեղ մաշտոցյանի հայեցողությամբ, և պարտավոր չէր ենթարկվելու իրենից ծածուկ անհամբեր, հախուռն ու գահավիժող որոշումների և ելույթների՝ շարամիտ (Վահան Ամատունի), անպատասխանատու կամ նվազ պատասխանատու անձերի կողմից։ Երբ Տիգրոնում համաձայնած էին հետևվելիք ուղեգծի մասին, ժամկետ չէին որոշած, թե երբ թոթափեն կեղծուրացի երևույթը. այդ կախված էր Իրանում և կամ շրջակա երկրներում պատահելիք փոփոխություններից, որոնք կարող էին ճնշումը վերացնել Հայաստանի վրայից. կախված չէր անհամբեր ու հախուռն անձերի, նույնիսկ Վասակ մարզպանի ցանկությունից, այլ դեպքերի ու պարագաների ուղիղ կշռադատումից և առնչվելիք համապատասխան նպատակահարմար քայլերից. Վասակը պետք էր սպասեր առնվազն իր նյութած արտաքին հակապարսիկ իրադարձություններին։

2. Երկու մատենագիրներն էլ վկայում են, թե Վարդանանք Վասակին բռնի են իրենց միանցրել, երդվեցրել և ստորագրել-կնքել տվել. «ոչ կամաւ, սակայն ի հարկէ յանձն առնալ միաբանէր» (Փարպ.. Բ. լբ)։ «Իսկ երբ մարզպանին էլ ձերբակալեցին, նա երդումով միաբանվեց նրանց հետ... գրեց և կնքեց...» (148—9).

Իսկ տարբերական խղճմտությունը և արդարամտությունը ասում են, և իրավաբանությունն էլ ամենուրեք հաստատում է, թե բռնի խոստումը, երդումը, ստորագրությունն ու կնքումը վավերական չեն, ուժի մեջ չեն կարող լինել։ Ուստի Վասակն իր անվավերական բռնի խոստումից ու երդումից հրաժարվելովը ապօրինի և անիրավ գործ կատարած չեղավ, որով՝ «մատնիչ դավաճան» չէ։ Ճիշտ ինչպես, որ Տիգրոնում բռնի ուրացված տասը նախարարներն էլ Հայաստան դառնալուց հետո ուժեցին իրենց կրոնափոխությունը[20]։

3. Վասակ Մարզպանին կարելի կլիներ «դավաճան» կոչել, եթե նա ապստամբ Վարդանանց կողմնակից ձևանար, և հանկարծ նրանց դեմ դառնար Ավարայրում։ Բայց նա արդեն ամիսներ առաջ հայտնած էր իր երկրորդ դիրքավորումը կայսեր մերժումից հետո, այսինքն այլևս ապստամբության հակառակ լինելը. անշուշտ կոնխատեսորեն ու իմաստնարար գերադասելով բուն իսկ Տիգրոնը տարհամոզելու ուղին, (ինչպես վերևում տեսանք)։ Իսկ հետևանները, կրքոտ հախուռնության այլևս անտեղի ընթացքը շարունակելով, վարչապես պատասխանատու մարզպանի վրա բռնացա՛ն, ինչպես վերևում տեսանք։

ՀԱՅԱԳԻՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ Ի ՆՊԱՍՏ ՎԱՍԱԿԻ

Պատմիչները կարող են ակամա սխալվել կիսատ կամ սխալ տեղեկությունների պատճառով, և կամ մոռացությամբ ու շփոթելով դեպքերը, դեմքերը, տեղերն ու ժամանակները։ Կարող են սխալվել և կամա՛վ, իրենց ներշնչված միակողմանիությամբ կամ գիտակցարար։ Այդ պատմիչների գործերն էլ կարող են սխալագրվել արտագրողների տգիտության, անուշադրության, ճանձրույթի, սրտնեղության և կամ հիվանդության ու քաղցի պատճառով. և կամ՝ դիտմամբ կամ պարտադրմամբ շարափոխվելով (խմբագրվելով)։ Մանավանդ որ, տպագրության չգոյության պայմաններում, հնարավոր էր ամեն մի ձեռագիր գիրք հետապնդել, որոնել, գտնել ու շարափոխել, կամ նույնիսկ փչացնել։

Բայց ժողովրդի մտայնությունը, միտումը, գնահատումը և ոգին արտահայտող, և դարերով, նույնիսկ հազարամյակներով արմատացած սովորույթներն ու բարքերը ենթակա չեն այդպիսի շարափոխումների ու խեղաթյուրումների պատահականություններին։

Ժողովուրդը վատերի անունները չի տեսնի նորածիններին անվանակոչելիս. այլ՝ սիրելիների և արժանիների հիշատակը կհավերժացնի գնթ նրանց անունները չմոռանալով։

---

20 Արդեն սպարապետ Վարդան էլ հրաժարվեց բռնանալու սկզբունքից.—Ավարայրում նա պատվիրեց վերջապահին (իր եղբորը) կռվելուց հրաժարվողների վրա չբռնանալ, այլ միայն հորդորել։

Այդ վաղեմի սովորությունը[21] արդեն պատմության արշալույսին իսկ գոյություն ունեցած և տնած է բազմաթիվ երկրներում, ու տևում է ցարդ։ Դրան ապացույց են հին Եգիպտոսի դահատոհմերի հաջորդական փարավոնների վրա կրկնված անունները՝ Փեփիներ, Նեխոներ, Թութմուսներ, Սեթիներ, Ռամսեսներ։ Շումերում՝ Լանանատումներ։ Ասսուրիայում՝ Հաղաղներարիներ, Աշուրուբալիտներ, Աշուրդաններ, Սալմանասարներ։ Հաթիայում՝ Մուրշիլներ, Խաթթուսիլներ, Առնուվանդաներ։ Ուրարտուի՝ Արգիշտիները, Սարդուրիները, Ռուսաները։ Աքեմենյան Իրանում՝ Կյուրոսներ, Դարեհներ, Քսերքսեսներ, Արտաշեսներ, Մակեդոնական իշխանություններում՝ Ֆիլիպներ, Ալեքսանդրներ, Սելևկոսներ, Անտիոքոսներ, Պտոլեմիներ։ Պարթիայում՝ Արշակներ, Միհրդատներ, Հրահատներ, Արտավաններ։ Պոնտոսում՝ Միհրդատներ։ Կապադովկիայում՝ Արիարաթներ։ Հայ դահատոհմերում՝ Արտաշեսներ, Տիգրաններ, Արշակներ, Տրդատներ, Խոսրովներ, Աշոտներ, Սմբատներ, Դավիթներ, Ռուբիններ, Թորոսներ, Լևոններ, Հեթումներ։ Սասանյան Իրանում՝ Արտաշիրներ, Շապուհներ, Հազկերտներ, Վռամներ։ Վրաստանում՝ Վախթանգներ, Գեորգիներ և այլն։ Աղվանքում՝ Վաչագաններ, Վաչեներ և այլն։

Այդ անիարդախելի ազգագրական հինավուրց և գրեթե համաշխարհային երևույթը գործած է նաև ի նպաստ Վասակ Սյունու։ Ակադ. Հրաչյա Աճառյանի «Անձնանունների բառարան»-ում չկա մի երկրորդ Վարազ-Վաղան, կամ Գլիոն և կամ Փիսակ. իսկ Մեհրուժան՝ միայն չորսը։ Բայց Վասակ Սյունուց հետո իր անունը կրկնվում է 70-ից ավելի անդամներ. Նույնիսկ դեռ 1662 թ. Առ. Դավրիժեցի հիշում է Վասո Խոջա հային, Վան, (517)։ Միտումնավոր, կրքոտ ու զրպարտիչ կերպով, նաև անգիտորեն կրկնված «մատնիչ, դավաճան» դատափետումներն ու լուտանքները, Եղիշեի Վասակին «իբրև զշուն» մեռցնելը և, Ս. Շահումյանի բառերով. դարերի դարեր շարունակ կրկնած «հեքիաթներն ու պրիմիտիվ տիրացուական պատմահայեցողությունը» անզոր են եղած վերջնականապես դատապարտելու նրան։ Կորյունի կորովի վկայությունները, ազամանդափայլ ու պողպատակուռ, ուժի մեջ մնում են հակառակ դարավոր բացասական հորջորջումների։ Անաչառ պատմաքննությունը, զերծված՝ հեշտին սովորական կրկնումներից, կհամաձայնվի Կորյունի բնութագրումներին, և վերոհիշյալ ազգագրական փաստի հաստատմանը։

Ա՜խ, եթե գեթ մի անաչառ պատմիչ դրած լիներ Վասակի մասին, և այդ անաչառ գրվածքները մեզ հասած լինեին...

Բայց միթե չի՞ եղել այդպիսի անաչառ և կամ Սյունյաց պատմիչ։ Անշուշտ եղել է,—եթե Դահնամակում 2-րդ տեղը՝ բարձր գրավող Բագրատունիները ունեցել են իրենց պատմիչները՝ Մ. Խորենացին (Ե. դար) և Սեբեոսը (Է. դար), եթե 4-րդ տեղը գրավող Մամիկոնյաններն ունեն իրենց պատմիչները՝ Փավստոսը և Ղազար Փարպեցին և կրոնա-գյուցազնավիպող Եղիշեն (Ե. դար), ինչպե՞ս կարող էին Սյունիները, որ ըստ Դահնամուկի առաջին բարձն ունեին, չունենալ իրենց պատմիչը նախքան Օրբելյանը (ԺԳ դար). անշուշտ ունեցել են։ Բայց նրա գրածներն անհետացվել են, խիստ հավանորեն չարամիտ կանխամտածմամբ։

IV

ՎԱՍԱԿ ԿՈՂՄՆԱԿԻՑ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԻՄԱԴՐԱՆՔԻ. ԲԱՅՑ ՈՉ ՀԵՌՏՄԱՆ

Հարազատ մաշտոցյան Վասակը, որ որպես Սյունիքի իշխան երեսուն տարի որդիարար գործակից ու հովանավոր եղած էր Մաշտոցի գործունեությանը, և անշուշտ նույնը շարունակած էր նրա մահից հետո էլ իր մարզպանության տասը տարիներում, և որի շնորհիվ կարողացած էր «բարձր ու շքեղ» լինել «ի մեջ» մաշտոցյան «աշխարհիս Հայոց», անշուշտ չափազանց դժգոհեցավ, երբ Տիզբոնը խախտեց, ի մեծ ուրախություն ուրացած չարախինդ դրգիռ Վարազ-Վաղանի, պարսկապատկան Հայաստանի (45 տարիներից ի վեր մաշտոցյան) ստատուսը գոյավիճակը։ Հայ ժողովրդի կիսանկախությանը տրված այդ ճակատագրական լինել սպառնացող հարվածը գործնականում ուղղված էր նաև, և մանավանդ, մարզպան Վասակի՞ն, որ այդպիսով երկսայրի, մուրճուսալեան երկվտանգ, անել երկրնարանքի մեջ էր դրվում, ինչպես վերևում տեսանք։

21 Ի դեպ՝ այդ բացարձակապես վավերական ու հարազատ մնացած երևույթը, որքան ինձ հայտնի է, բնավ կամ գրեթե չի օգտագործվել պատմության անորոշ ու մութ պարագաները հետախուզելու, մինչդեռ կարող է բացեր լրացնել, գահատոհմերի արքաների հաջորդականության հարցերը քիչ-շատ լուծել, կամ գահատոհմերի փոփոխության վրա լույս սփռել։

Մ. Օրմանյան ակնարկում է դրան. («Ազգապատում», Ա. 362)։

Այսպես, մարզպան Վասակ Սյունու և Հայաստանի կենսական դերագույն շահերն այնքան սերտ համաձուլված էին իրար, որ մեկի վնասվելովը մյուսն էլ կվնասվեր. և հակադարձաբար։ Հետագա դեպքերը լրիվ ապացուցին այդ։ Պետք էր խուսափել այդ հարվածից ի շահ իրեն և հայության. պետք էր ետ դարձնել դրուժան Տիզբոնը իր դրուժանությունից, ինչ որ հնարավոր էր դժվարին բարդություններ խմբելով Իրանի գլխին, գաղտնորեն գործի լծելով նպատակահարմար լծակներ ու զսպանակներ. և մյուս կողմից՝ իմաստնաբար օգտվել այդպիսով նյութված հակապարսիկ կացությունից, ու համոզիչ դիվանագիտական լեզվով տարհամոզել Տիզբոնի արքունիքը ետ առնելու իր հակահայ և հակաքրիստոնյա հրամանները։ Պետք էր ցույց տալ, թե անհնար էր դավադիր, ատելի և շարախիղդ Վարազ-Վաղանի ծրագրի իրագործումը. և Տիզբոնին՝ շատ վնասակար, տնտեսապես և քաղաքականապես։

Վասակ միայն ա՛յդ ուղիով կարող էր խուսափել ու հայությունը խուսափեցնել աղետից։ Եվ բոլոր իր ժամանակակիցների շարքում միայն ի՛նք կարող էր Գորդյան հանգույցը լուծել, ընտրելով այդպիսի մի խիզախ առաջադրանք, նույնիսկ անհնարին թվացող։ Իրանը նեղը դնել, բայց ոչ հայոց ձեռքով, այլ գաղտնորեն»։ «Խոտորնակին՝ խոտորնակ»։ Եվ անշուշտ Տիզբոնի առաջին ազատասպան հրովարտակի վրա, ինչպես տեսանք, ինքն էր, որ գաղտնի սուրհանդակի միջոցով դրդեց քուշան-հոներին արշավելու (135), և բազում արքունի գավառներ ավերելու. (չէ՞ որ հետո դատի միջոցին՝ երկու անգամ ամբաստանվեց հոնաց հետ ծածուկ համաձայնած լինելու հանցանքով), որը Տիզբոնում կալանավոր տասը նախարարները «երկնից մեծ օգնականություն» համարեցին, և որը Հազկերտի ուշադրությունը գրավեց և նրան շտապեցրեց դեպի Քշնամին։ Արքան ստիպվեց, ինչպես տեսանք, կրոնափոխման «հանդիսավոր արարողության պայմանները զանց» անել (Մ. Օրմանյան, «Ազգապատում», Ա, 356), և մի քանիսի ատրուշանում գլուխ խոնարհելովը գոհանալ։ Ըստ Եղիշեի, այս կրոնափոխման վրա՝ զորքի մեջ գտնվող քահանաները զատվեցին նախարարներից, և փութով մի ձիավոր գուժկան ուղարկեցին Հայաստան (141)։ Բայց այս քահանաների խնդիրը խառնակ է Եղիշեի մոտ (139)։ Խիստ հավանական է, որ այդ ձիավոր գուժկանը ծածկաբար ուղարկողը Վասակն էր, նպատակ ունենալով, բնականաբար կրոնորյարի միջոցով, նախապատրաստել մի ժողովրդական ցույց ընդդեմ Տիզբոնի հրամանի կենսագործման, ծայրահեղը ծայրահեղով հակակշռելու՝ չեզոքացնելու համար, և մեծը իր ուղիղ դիրքին բերելու, նախորդ խաղաղ գոյավիճակը տևեցնելու։ Կրոնքին դիպած էին, և ուստի նախ կրոնորյարը պետք էր վրդովվեր և հակազդեր։ Անշուշտ իր այս ձեռնարկը գաղտնի պահեց մյուսներից, շատ-շատ՝ հայտնեց այն չորս անձերին, որոնք հետո իրեն կողմնակից եղան, բայց ոչ՝ հուզական Վարդանին և սրա մտերիմներին։ Եվ միթե այս ենթադրությանս չի համընկնում Վասակի ընդհանրապես «ենենգավոր» կոչվելը Փարպեցու կողմից, մոտ 15 անգամ (և ոչ մի անգամ «ուրացող»), մեղադրելով որ նա գործն սկսեց, բայց հետո ետ կացավ հետևությունից, (կայսեր մերժումի պատճառով).

Ինչ գնահատման էլ արժանանան հիշյալ հավանական ենթադրանքները, համենայն դեպս Վասակ մարզպանը կայսեր մերժումից հետո հրաժարվեց իր առաջին դիրքավորումից՝ ենթադրական դիմադրությունից՝ հեստումից. և մնաց կրավորական դիմադրության կողմնակից—իր երկրորդ դիրքավորումը, ինչպես տեսանք. այսինքն կրոնափոխական կիսամիջոցներով երևույթները փրկել, ձգձգել, նույնիսկ հեթանոսական երգերով զվարճություններ սարքելով (146), մինչև որ Իրանի ներքին կամ արտաքին իրադրությունների մեջ պատահեին այնպիսի անցուդարձեր (մա՛ն, գահակռիվ, ներքին խլրտումներ, արտաքին հարձակումներ, քաղաքական ու դիվանագիտական փոփոխումներ), որոնք ճնշված Հայաստանի ծանր դրությունը թեթևացնել ստիպեին. և կամ՝ ինք խոհեմաբար կարենար տարհամոզել Տիզբոնը, իր բարեկամ և կամ խոհական ու տաքավոր պարսիկ ավագների միջանդակությամբ էլ։

Վասակի չհեստելու պատճառները.—1. Նա խաղաղասեր էր. ոչ մի հակառակորդի չսպաննեց. նույնիսկ Ավարայրում էլ վերջին փորձ արեց՝ հեստողներին տարհամոզելով կանխարգիլելու արյունահեղությունն ու ավերածությունը։ 2. Իր անձնական օրինական շահերն էլ համընկնում էին խաղաղությանը—պահել իր երկու պաշտոնները՝ Սյունիքի տանուտերությունն ու մարզպանությունը, անվտանգ պահել իր երկու պատանդ որդիներին Տիզբոնում. և պահել 40 տարում իր երկուատեք ձեռք բերած համարումն ու դիրքը—մնալ «շքեղ և բարձր ի մեջ աշխարհս Հայոց, և յոյժ մեծարգոյ և երևելի ի դռան արքունի»։ Վասակը ի՞նչ շահ ուներ այսպիսի բարձր կացությունը խանգարելուն մեջ, վրա տալով այդ ամենը և իր կյանքն իսկ։ Ընդհակա-

ռակը՝ Վասակի այդ շքեղ, բարձր, մեծարգո և երևելի դիրքը խանգարել ուզողնե՛րն էին դավադիր փեսա Վարազ-Վաղա՛նը Տիզրոնում, սրա դրդած Միհրներսեհ հուգարապետը, (որ հետո զղջաց ու խոստովանեց, ինչպես տեսանք), և չարանենգ ու կեղծավոր Վահան Ամատունին՝ Հայաստանում։ 3. Նախատես ու իրատես իմաստուն Վասակը ճիշտ էր գնահատում ուժերի համեմատական կշիռը Իրանի, Բյուզանդիայի և նախարարական պարսկապատկան Հայաստանի։

Պարսկաստանի ուժի, դիրքի և կացության մասին նա դիտեր իր պատանուց պատանդության տարիներից, նրա և իր իշխած Սյունիքի սահմանակցության բերումներով, Սասանյան արքունիքի հետ մարզպանի իր վարչական հարաբերումներով, և պարսիկ ավագանու հետ իր անձնական շփումներով։ Նա գիտեր Բյուզանդական կայսրությանը սարսափ ազդող իրանյան բանակի ուժը—Մատյան գունդ, փղագունդ, ահագին բանակ։ Այս ուժին վրա էր, որ Միհրներսեհին գրգռող դիվազգյաց Վարազ-Վաղան Սյունեցին հաշվում էր, թե եթե հայերը կրակապաշտ չդառնալով գիմադրեն, այսպիսի մեծ ուժերի դեմ կենալ չկարողանալով բոլորովին կկորչեն սունով ու տեղով (Փարպ., Բ, ի)։

Բյուզանդիայի ուժի, դիրքի և կացության մասին Վասակ մարզպանը գիտեր պարսից արքունիքի վարած դիվանագիտական հարաբերություններից, արտաքին առևտրողներից, այնտեղ ուղարկված հայ ուսանողներից, իրեն գործակից բյուզանդական սպարապետ (Ստորին Հայքի) Վասակ Մամիկոնյանից (Եղիշե, 170), և մի շարք քաղաքական դեպքերից հետևցնելով.—Բյուզանդիոնը հավանած էր Հայաստանի բաժանմանը «մեծ մասը, լավը, պիտանին և արգավանդը» Պարսից թողելով. (Փարպ. Ա. գ.)։ «Խաղաղասեր քրիստոնյա» Թեոդոս Բ կայսրը, երբ տեսավ, որ Հազկերտ Բ-ը «որպես կատաղի գազան հարձակվեց... հարվածեց, և ասպատակ սփռելով ավերեց Հոռոմների շատ գավառներ, հրդեհեց բոլոր եկեղեցիները, ավար ու գերի հավաքեց ու ահարեկեց երկրի ամբողջ զորքը,... չկամեցավ նրա դեմ պատերազմի դուրս գալ, նույնիսկ նրան հանձնեց ապաստանած քրիստոնյա պարսիկ փախստականները, «ամենը... կատարեց նրա կամքի համաձայն, և իջեցրեց նրա յարկությունը» (Եղիշե, 102)։ Եվ Միհրներսեհ ասում էր Հազկերտին, թե «կայսրը քո հրամանից դուրս չի գալիս» (129)։

Նախարարական Հայաստանի կացության, դիրքի և ուժի մասին ավելի ճշգրիտ գաղափարներ Վասակ մարզպանը. աղաղակող դեպքեր էին՝ նախարարների մի պաշտպանական զինադադարություն չկազմելը, ո՛չ գահի շուրջ, և ո՛չ էլ առանց դահի. Հայաստանի բաժանումը արգելել չկարողանալը, բյուզանդապատկան Հայաստանի Արշակունի գահի վերացումը արգելել չկարենալը, հենց հայ նախարարների պահանջով պարսկապատկան Հայաստանի Արշակունի գահի վերացումը, հայրապետի իրավասությունների երկփեղկումը արգելել չկարողանալը, հաջորդաբար երկու ասորիների հայոց հայրապետ նշանակվելն արգելել չկարողանալը։

Հայ նախարարների անմիասնական ուժի ճղճիմության մասին (պարսից ահեղ ուժի դիմաց) Վասակ մարզպանի նախատես և իրատես բացասական գնահատումը հաստատվեց Ավարայրի «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ընթացքովն ու անմիջական հետևանքներով.—խուժում, խուճապ, պարտություն, փախուստ։ 66,000-ից միայն 285-ը զոհվեց բուն ռազմադաշտումը. ի տեղւոջ պատերազմի պսակեցան» (Փարպ., Բ, լթ). «ի տեղւոջն կատարեցան» (Եղիշե, 5-րդ յեղանակի վերջում). 1000-ից՝ ոչ իսկ 6։ Զոհվածների 47 տոկոսը Մամիկոնյան գնդից էին, ուր նախարարությունների գնդերի ամեն մեկից՝ ոչ իսկ 7 տոկոս։ Մեծապես գնահատելով հանդերձ մի գաղափարով համոզվածության պատճառով այդ ինքնազոհման առաքինի հետևողականությունը, մանավանդ թե այդ իսկ պատճառով, պատմական ճշմարտությունը հետազոտողը չի կարող չդիտել, թե մնացած 18 նախարարական գնդերից՝ ոչ ոք զոհվեց։ Ըստ Եղիշեի՝ «Վատերի փախուստ, վհատածների թաքուստ, անարի մարդկանց սրտաբեկում, կանացիների ճչյուն»՝ (իսկ այդ փախչողներն էին Վարդանի եղբայր Համազասպյանը, փեսան՝ Արշավիր Կամսարականը, հնստումն շտապեցնող Վահան Ամատունին, Ներշապուհ Արծրունին և այլն)։ Համեմատելու համար հիշենք, թե 775 թ. արաբների դեմ ապստամբած 5,000 հայ մարտիկները Բագրևանդի ճակատամարտում 3.000 զոհեր ունեցան, 1000 հոգուց 600, Ավարայրի զոհերի (համեմատաբար) հարյուրապատիկից էլ ավելի)։ Եվ ի՞նչ հույս կարող էր լինել այդպիսի մի ճակատամարտից, ուր Ղևոնդ երեցը փորձում էր հայ զորքը խանդավառել22 քսան դար առաջվա մի հրեա Փենեհեղ քահանայով (182), և ուր

22 Հիշենք նաև թե սպարապետ Վարդան իր Ավարայրի ճառում քաջագործությանց օրինակ բերեց 6—7 դար առաջվա հրեա ազատամարտիկ Մակաբայեցիներին, անտեսելով ժամանակով ու ծագումով շատ ավելի մոտիկ (4-րդ դարի) մեր հերոսներին—հենց իր նախնիներ Վաչե Մա-

շատերը եկած էին բռնի, ոտ հարկի և ոչ կամաւ (Փարպ., Բ. լթ.) անշուշտ սարսափի տակ թշված՝ այնպիսի մոլեռանդների կողմից, որոնք հանդգնած էին տարակարծիք Զանդազան իշխանազունին քարկոծել, և նույնիսկ երկրի վարչության գլուխին՝ մարզպան Վասակին ձերբակալել ու բռնանալ։

Ակներև է, որ Ավարայրը Սահակ-Մեսրոպյան հոգեսերնդին պատիվ չբերեց, ընդհանրապես, արժանի՝ նրա անվանը։

4. Հարազատ մաշտոցյան Վասակ մարզպանի ազգախնամ մտահոգությունն էր նաև պահել ու տևեցնել երկու երրորդ դարի (Հայաստանի բաժանումից սկսած) խաղաղությունը, երկրի շենությունը[23] և մաշտոցյան գործունեության 45 տարվա արդյունքները։ Ինչո՞ւ խանգարել սրանք, տառապեցնել ժողովուրդը, ավերել երկիրը, մանավանդ Իրանի սահմանակից իր Սյունիքը։ Անշուշտ նա հիշում էր իր պապ Անդովկի երկարատև հակապարսիկ պայքարները, բայց ի վերջո Նապոտ 2-րդի խոշոր ուժերից պարտվելու հետևանքով Սյունիքի հիմնահատակ քարուքանդ արվելը, որը իր հայր Բաբիկն ու ապա ինք երկարատև ու մեծ ջանքերով հաղիվ կարողացած էին վերաշենցնել։ 5. Վասակ մարզպանն իր հեղինակության, վարկի և արժանապատվության տեսակետից չէր կարող թուլատրել, ինչպես իր իրավասություններին և պատասխանատվություններին գիտակցող որևէ ինքնահարգ վարիչ, որ իր կառավարած երկիրն ու ժողովուրդը հախուռն գահավիժման ահավոր պատահականությունների ենթարկվեն։ Սա չէր կարող հանդուրժել, որ իր վարչությունն աղարտվի՝ ի վերջո ձախողման դատապարտված (թեկուզ ենթադրական ասպին մեկ-երկու կարճատև աջողանքներից հետո) խառնակություններով։

Այդ պատճառներով Վասակը, շարժման սկզբնական շրջանին՝ քիչ-շատ հայտնի կամ գաղտնի գործակցելուց հետո, այն մինչև հեստման,—անոգուտ և աղետաբեր,—հասցնել ուզողներին չմիացավ. այլ խոհեմաբար անկյունայարձ անելով առաջադրեց հենց Տիզբոնն իսկ տարհամոելի, ցույց տալով բռնադատման պատճառելիք տնտեսական, զինվորական ու բաղաքական խոշոր վնասները Իրանին։ Եվ հաջողեցավ ազատ կրոնի հրոլարտակ ու ներողագիր բերել տալ Հազկերտից, ինչպես տեսանք։

Հայոց մեծ մասը հավատացին դրանց և շարունակեցին անխափան հաճախել եկեղեցի ըստ սովորականին, նույնիսկ եպիսկոպոսները։ Միայն փոքրաթիվ հեստամիտներ համառեցին այլևս անտեղի դարձած հեստումը շարունակել դեպքերը գահավիժել իրենց ու հայ ժողովրդի գլխին, և հետո իրենց արդեն անհուսալի ելույթի ձախողանքի վրեժն առնել Վասակի դատում։ Իրենք ձախողած էին։ Ինչո՞ւ մեծ Սյունեցուն էլ չձախողեցնել, չե՞ որ բարձրից՝ փոխարքա-մարզպանի դիրքից անկումը շատ ավելի սարսափելի և ուժեղ թափով կլիներ, քան իրենցինը...։

Բայց հայ մարզպանի վարչությանը չհանդուրժող, և նրա ամենօգուտ իմաստուն զգուշացումներին չանսալու խիզախող սակայն ձախողած այդ հեստականները, (որոնք հետո դատատյանում էլ խիզախորեն պիտի գրոհեին բազում կողմերից հարձակմանց ենթարկվող անոք մնացած Վասակի դեմ հնարավոր բազմապիսի ամբաստանքներով ու զրպարտանքներով), նոր մարզպանի՝ պարսիկ Ատրորմիզդի հանդեպ այնքան հլու և վիշող դարձան, որ իրենց ապաստան ամրոցներից իջնելով, ոչ միայն անձնատուր եղան նրան, այլ նաև, որ մեծապես ուշագրավն է, «շու-

---

միկոնյանին (խոսքով Բ Կոտակի սպարապետ, որ բազում հաղթանակներից հետո զոհվեց, և Վրթանես հայրապետի կողմից տոնելի սուրբերու կարգը դասվեց։ Ի դեպ՝ ինչո՞ւ այդ տոնը չհիշվեց այլևս..), Վասակ Մամիկոնյանին (Արշակ Բ-ի սպարապետ. որ զոհվեց Անհուշ բերդում, Իրան), և Մուշեղ Մամիկոնյանին (Պասլ արքայի սպարապետ)։ Սրանք ավելի՛ մատչելի օրինակներ կլինեին հայ զորքը խանդավառող։

23 Ավարայրի «ճակատամարտի» նախօրյակի կապակցությամբ Հր. Արմեն երկու հակառակորդ հայ բանակներին էլ հավասար մտահոգություն է վերագրում ճակատամարտը Հայաստանից ներս չմղելու մասին (239)։ Բայց ինչո՞ւ նկատի չունենալ թե մի կողմից՝ Վասակ սպանությանց չէր դիմում. և Ավարայրում իսկ փորձեց տարհամոզելով խափանել արյունահեղությունը (180), մինչ մյուս կողմից՝ հեստականները սպանեցին համախոհ չեղողը, և Սյունիքը ավերեցին ու սովի մատնեցին այն աստիճան, որ կղերորյարը լաց էր լինում շարաշար վշտացածների՝ բոկոտն քշվող փափկասուն կանանց և քարի զարնվելով («հարեալ») ճամփաներում ընկած տղաների համար (161)։ Եվ ակներև է, որ «ինահատակությանց ձգտող «սակավաթիվ» հեստականների պարտվելովը՝ այնպես էլ Հայաստանը բաց կմնար արշավող հաղթական պարսիկ բանակին առջև։ Ուր է այստեղ վերոհիշյալ մտահոգությունը։

տով բերին իրենց կանանց ու որդիներին, և ունեցած դույքը հանձնեցին մարզպանի ձեռքը» (202)։ Ի՞նչ անհրաժեշտություն կար դրան։ Պարսիկ արքունիքը այդպիսի պահանջ չէր արել։ Եթե երաշխիք էր հարկավոր, արդեն իրենք անձնատուր եղած էին, էլ ի՞նչ երաշխիք. և ի՞նչ պետք կար մարզպանին վրա իրավական-վարչական-հաշվական ավելի հոդսեր բարդելու։

Միակ հավանական պատճառը սա կարող է լինել,—իրենք ռամիկից ու շինականից վախենում էին հետևյալ պատճառներով.—1. Կար ճնշված ռամիկների ու շինականների [illegible] ատելությունը, ինչպես հետևվում է Ղևոնդ երեցի ճառից Ավարայրում, ուր շարքայինների մեջ զոհվելու տրամադրություն ստեղծելու համար նա կարեկցություն ու համակրանք է ցույց տալիս, նրանց թշվառ անապրելի վիճակը նկարագրելով. «Ինչ աղետալի բաներ... չեն գործվում այս ախտաբեր երկրայինների մեջ. աղքատների թշվառություններ և... անթիվ շարշարանքներ, հարկահանների կողմից ծանր նեղություններ, զզվանք ու կոփահարում ընկերակցող բռնավորների կողմից, քաղց ու ծարավ... ձմռան սառնամանիք և ամռան խորշակ, տարաժամ և մահաբեր ախտեր ու երկյուղ արտաքիններից և արհավիրք ներքիններից. կանխահաս մահվան են ցանկանում, բայց չեն գտնում... շատեր... երբ այն գտնում են՝ ուրախանում են։ Իսկ մեծության մեջ աչողած թվացողները և այս անցավոր կյանքը փափկակյաց ուրախությամբ անցկացնողները մեծամտելով հպարտանում են...։ Ի՞նչ շարիքներ կան, որ չեն գործվում նրանց մեջ, մեծության հետ խառնված է աղքատների գույքերի հափշտակումը։ ...Ինչերի մեջ, որ վայելք են զգում՝ անխտիր նրանց են երկրպագում որպես աստուծո...». (իմ թրգմ. Վ.)։

2. Այդ ճնշված դասակարգը բռնի էր զաղմադաշտ քշվել կրոնորյարի և նախարարների կողմից, «առ հարկի և ոչ կամաւ» (Փրպ. Բ, լթ)։

3. Գոնե Ավարայրի կռվից հետո այդ դասակարգը լրիվ հասկացած էր այդ կռվի անտեղի և պատճառազուրկ եղած լինելը, և համապատասխանորեն՝ իրենց կրած դժվարությունների ավելորդ և իզուր լինելը։

4. Այդ ճնշված դասակարգը դառնացած էր, ականատես լինելով նախարարների և սեպուհների ձիավոր փախուստին ռազմադաշտից, մինչ իրենք՝ հետևակները թողնվում էին պարսիկ զորքից հալածվելու և սրածվելու։

Ճնշված դասակարգի զայրացկոտ, դառնացած ու ոխակալ վերաբերմունքի և լարվածության պայմաններում՝ նախարարները վստահ չէին իրենց ընտանիքների և գույքերի ապահով մնալուն, ուստի իրենց իսկ նախաձեռնությամբ հանձնեցին պարսիկ մարզպանին՝ ապահով պահվելու համար։ Իրավ որ պատճառ ունեին վախենալու...։

V

ՎԱՍԱԿԻ ԴԱՏԻ միջոցին ճակատամարտից փախչող «վատերը, անարիները» (Եղիշեի բառերով), այս հակապարսիկ մարտնչողները Վասակին ամբաստանեցին սրա հակապարսիկ գործերով, որոնց իրենք էլ գործակցած էին, ցույց տվեցին Վարդանին վերադարձ առաջարկող և արտաքին օգնություն խնդրող այն նամակները, որոնք Վասակն էլ ստորագրած էր, և որոնք՝ վերջինները հասցեներին ուղարկված չէին. և Սատանայ՛ն պետությանն շահերին պաշտպան կանգնեցին։ Անաղնիվ մերկացումներ (202—206, Փարպ., Բ, խէ, խզ)։ Եվ այս «անարիս ամբաստանողդրպարտողների բերանը Վարդանի փեսան էր։ Արշավիր Կամսարականը «սուրբ հոգուց զորացած». (Փարպ., Բ, խե)։ Արդարև հիանալի չէ՞,—քրիստոնյաների սուրբ հոգին ծառայության մեջ է կրակապաշտ, արյունարբու, քրիստոնեահալած, սատանի գործակից, կատաղի գազան,—ըստ Եղիշեի բնորոշումի,—Հաղկերտ 2-րդին...։ Ամենից ճարտասան պարսկասերը գտնվեց Ավարայրից փախած «քաջ» (189) և «իր անձը մահու տալու փափագող» (Փարպ., Բ, լզ) Արշավիր Կամսարականը (Վարդանի փեսան), որ նույնիսկ հակապետական հանցանք ներկայացրեց որդեսեր հոր՝ Վասակի պատանդ վերցնելը պարսիկների, ապահովելու համար Տիզբոնում պատանդ իր երկու որդիների կյանքը։ Ինքն առանձին 20-ի չափ ամբաստանքներ արեց։ Խիստ պարսկասեր դուրս եկավ հիմա Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսը, թեև իր հովված ռշտունիներից ոչ ոք զոհված չէր Ավարայրում. նա ամբաստանեց Վասակին, թե ինչ որ Հաղկերտի «նախնիքը մեծ աշխատությամբ էին ձեռք բերել, դա մի տարում կորցրեց ամբողջ երկիրը»։

Վասակին ինքնապաշտպանում չթույլատրեցին, և լսելու տրամադիր չեղան։ (Փրպ., Բ, խզ)։ Որո՞նք։ Անշուշտ այն պարսիկ պաշտոնատարները, որոնք կա՛մ նախանձում էին Վասակին, և կա՛մ երբեմն մեղադրվել էին Հաղկերտից որպես իր «գործերի ամբողջ անհաջողության» պատճառ (161), պետք եղածը չհիշեցնողներ, քրիստոնյաների մասին «ամեն տեսակ չարություններ

խոսելով» արքայի ականջները ձանձրացնողներ, արքայի շուզածը գործել տվողներ, որով «մեծամեծ վնասներ եղան», «այստեղ իմ տան մեջ իմ դեմ պատերազմ» հարուցողներ, «մեղքն ու հանցանքը գցում էր մոգպետի և մոգերի վրա». այս խոսքերը լսող ավագները, որոնք «ամաչելով գլուխները կորացնում էին... և չէին կարող վեր բարձրացնել» (162). «գործերի անհաջողության պատճառն իր պաշտոնյաներին էր համարում»։ Սրանք բոլորը հիմա առիթ գտան բոլոր ախորդությունների պատասխանատվությունը բեռցնելու մի հայի՝ նախանձելի դիրք ունեցող Վասակի վրա։ Վասակը դարձավ քավության նոխազ Պարսից կողմից, և ատելավառ հայ նախարարների կրքոտ ոխի թիրախ մյուս կողմից։ Կորյունի գովաբանած հանճարեղ մաշտոցյան գործակցի դեմ ի՞նչ միաձակատություն—Վասակին ատող Միհրներսեհի և Վարազ-Վաղանի հետ մեկ գծի վրա են Վ. Ամատունին. Ա. Կամսարական, Սահակ Նպսկ, Ղևոնդ Երեց...։ Ավարայրից փախած «վախկոտները» (Եղիշե) քաջ են Վասակի դեմ...։

Եվ Վասակ մարզպանը, «քաջ, խորհրդական, յառաջիմաց, շնորհատուր իմաստություն ունեցող, հանճարեղ» Մեծ Սյունեցին, Մեսրոպ Մաշտոցի «հրամանների որդիաբար և հնազանդորեն մինչև ավարտ գործագրողը». «առաջին հայ մարզպանը խայտառակորեն հեռացվեց այդ պաշտոնից, և դաժանորեն տուգանվեց, այն աստիճան, որ նույնիսկ իր նախնիքների գերեզմաններից զարդեր հանելով վճարել մտածում էր. (Եղիշե, 207)։ «Պայիկները նրան ծեծեցին... խայտառականոք» արքունի հրապարակից դուրս հանեցին...։ Եվ հառաչանքներով ու լացով անցուց օրերը, մինչև իր մահը Պարսկաստանում» (Փարպ. Բ, խդ)։ Իսկ ըստ Եղիշեի «Դահճապետը մահապարտի զգեստ հագցրեց, ոտներն ու ձեռները կապեցին, և մատակ ձի նստեցրին կնոջ նման» և մահապարտների զնդանին հանձնեցին... Եվ որբստորե բերում էին ինչպես դիակ ու գցում էին մեծ հրապարակը, Նախատում ու ծաղրում էին, և ամբողջ բանակի առաջ խաղք ու խայտառակ անում։ ...Ծառաները նույնիսկ հաց էին մուրում նրա համար։ ...Հենց այնտեղ կապանքներում դժնդակ ախտերի մեջ ընկավ»։ Եվ Եղիշեն չափազանց ղղվելի ներկայացնում է Վասակի ախտահար մարմինը շատ տգեղ ու թանձր գույներով, մինչև «մեռավ իբրև զշուն» ասելը (7-րդ յեղանակի վերջում). «այն որ «էր շքեղ և բարձր ի մէջ աշխարհիս Հայոց, և մեծարգոյ և երևելի ի դրան արքունի»։

Եղիշեն, թեև քրիստոնյա վարդապետ, որ Ավետարանից պատվեր ունի մինչև 77 անգամ 7 ներել, Վասակի գահավիժելուց ու տառապելից վախճան ունենալուց հետո էլ ամենափոքր կտրեկցական ափսոսանք չունի առաջին հայ մարզպանի և Մաշտոցի (հանճարեղ և հնազանդորեն) գործակիցի հանդեպ, որի խայտառակորեն անկումը անպատվություն էր բերում ամբողջ հայության անվանը այդ օտար վայրում՝ Սասանյան մայրաքաղաքում, ուր գործերի անհաջողությունից զայրացած արքայի մեղադրած իր խորհրդակիցները (161) ամբողջ մեղքը Վասակի վրա բեռցրին, և ուր անշուշտ Վասակի պաշտոնին պարսիկ նախանձողներ պակաս չէին, և շարախնդորեն սպասում էին նրա անկմանը։ Իրոք, Տիզբոնը պետք չունեն կորովամիտ ու կորովասիրտ մաշտոցյանին։ Բայց զարմանալի է, որ Սասակին «իբրև շուն» մեռցնող Եղիշեն իր ամբողջ գրքում ոչ մի պարսավանք չունի «վատ, անարի, կանացի» փախչողներից որևէ մասնավոր անձի դեմ, և նույնիսկ Հազկերտին ու Միհրներսեհին շատ թեթև է մեղադրում համեմատած Վասակին։

Բայց արժե հարցնել՝ Ի՞նչպես եկավ, որ Վասակի նման մի պետական «դավաճան» չկուրացվեց Տիրան արքայի պես, կամ Անհուշ բերդում չբանտարկվեց Արշակ 2-րդի և Խոսրով 3-րդի պես, կամ մորթահան չարվեց սպարապետ Վասակ Մամիկոնյանի պես...։ Այստեղ էլ Վասակ մարզպանի վրա պատմվածը համոզիչ չէ. Մանավանգ, որ Վասակն ինքն էլ իրավունք ուներ իր յերեկ տված ընդհանուր ներողագրից օգտվելու։

VI

ՎԱՍԱԿԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ. «ինչպես տեսանք, Սյունիքի իշխան դարձավ իր քինախնդիր ուրացյալ փեսա «պիղծ, դիվազգեաց» Վարազ-Վաղանը[24], որ «եղած էր պատճառը բազմաթիվ մարդոց կորստեան, և Հայոց աշխարհիս կոտորածին, և կորստեան առաջնորդը»։ Հիմի էլ Սյունիքում «բազմաթիւ անիրավութիւններ արեց, և բազմաթիւ մոխրանոց տներ կանգնեց. իր Սիւնեաց տանուտերութեան ամբողջ ժամանակը» (Փարպ., Բ, Ի) ամբողջ քսանհինգ տարի

24 Դիտել թե Տիզբոն հարմար չտեսավ Վարազ-Վաղանին մարզպան նշանակելը.— Վասակ կարողացած էր Տիզբոնը համոզել, թե իր փեսայի ուղղությունը չի բայլի։

(Ստ. Օրբ., ԺԴ)։ Եվ նրանից հետո էլ «նույն չարութեամբն Գնդեհոն... և միշտ պատերազմեր ընդ մնացորդս Հայոց...17» տարի (Օրբ., ԺԴ, ԺԷ)։ Արդարև, Տիգրանին սրա՞նք էին պետք...։

Իսկ Հովսեփ հայրապետի և ընկերների, ու 37 նախարարների և սպասուհների աքսորանքի հետևանքով հայ հասարակության մեջ մեծ պարապ գոյացավ, և մեծ թափ ստացավ ռանձարձակ պատեհապաշտությունը, այնպես որ առհասարակ հայության վարկն էլ բնկավ մեծապես։ Այն աստիճան, որ ինչպես Լեոն խորհրդածել է, («Ս. Սեսրոպ», 318), Հազկերտ 2-րդի հաջորդ Պերոզ արքան, տեսնելով բազմաթիվ հայերի բարոյական հասարակական այլասերումը պատեհապաշտ քծնողությունը, «Հայոց լավության հնացած լինելը, իմաստությունը կորած, քաջությունը հեռացած, և երրևմնի քաջանուն հայ զորքը ծաղր ու ծանակ դարձած, հայտնապես նախատելով ասում էր ամբողջ ատյանի առջև, թե իմ տերության մեջ վերջին ծայր անպիտանը Ասորին է, բայց Ասորուց ավելի անպիտանը Հայն է. Եվ այս լուրը լսց ու ազգի արժանի էր» (Փարպ., Գ, կգ)։ Եվ այդ՝ ա՞յն աստիճան, որ մի սերունդ հետո, զոհված Հմայակի որդի Վահան Մամիկոնյանն անգամ, նույնիսկ առանց բանադատման, ստիպվեց ուրանալ, (թեև առժամապես, մինչև որ այլևս չհանդուրժեց և ապստամբվեց, բայց բարեբախտաբար ոչ-դաշտային մարտակերպով)։

Երկու ղղջում... բայց շատ ուշացած, և մեկ անգիտ.—

Վասակին ամբաստանող հայ նախարարները արդյոք հույս ունե՞ն իրենց արած պարսկանպաստ և հակավասակյան մերկացումների շնորհիվ անպատիժ մնալ, կամ գեթ թեթևակի պատժվել...։

Գրգռության առաջնորդ, ատրուշան քանդող ու մոգերին խոշտանգող կամ սպանող հոգևորականները, որ հանձն առած էին Ավարայրում զոհվել և սակայն չզոհվեցին, հեռավոր անապատներում չարաչար նահատակվեցին։ Արդյոք զղջման խղճահարություններ չունեցա՞ն իրենց վերջին օրերում։

Իսկ 35 նախարարները ու սպասուհները «ձեռքերն ու ոտքերը կապված գերվեցին Արևելքի բոցակեզ աշխարհը», հացի ու ջրի... կարոտ... ցերեկն իսկ խավարի մեջ... անվերարկու և անանկողին, գազանների նման գետնին փռված ինն ու կես տարի։ Արքան... նրանց մոտ ուղարկեց մեծ հազարապետին, առաջարկելով, որ արևին երկրպագելով ազատ արձակվեն։ Մերժեցին, և ափսոսացին, թե «ինչո՞ւ մենք էլ առաջինների հետ չվերջացրինք մեր կյանքը». (251)։ Ուշացա՞ծ ղղջում։ Այդքա՞ն երկարաձիգ չարչարանքներից հետո բաղձալի՞ դարձած էր՝ Ավարայրում, փոխանակ փախչելու, զոհված լինելը...։

Արդյոք որևէ խղճահարություն էլ ունեցա՞ն Վասակի հանդեպ իրենց բռնած դիրքի կապակցությամբ. գոնե Վարդանի եղբայր Համազասպյանը և փեսան Արշավիր Կամսարականը, և մանավանդ Վասակի պանդուխտ ու պատանդ որդիներին իսկ դավող Վահան Ամատունին։ Եղիշե լուռ է այդ մասին։

Բայց բարեբախտաբար խոսում է մի ուրիշ զղջման մասին.—Մեծ հազարապետը, որ «փոխվեց արքունի հազարապետության պաշտոնից և շատ բաներում վնասակար ճանաչվեց, և մեծ անարգանքով իր տունն ուղարկվեց, ինքը ևնց իրեն էր ճամարում հայոց աշխարհի ավերման պատճառը» (251—2), ինչպես վերևում տեսանք։ Եղիշե՞ր քան կշռեր, եթե գեթ ա՛յս առթիվ վերանայեր ինքն էլ իր իսկ դիրքը, և անգիտ վասակատյաց չմնար...։

VII

ՎԵՐՋԱԲԱՆ.—Հանճարեղ իրատես ու հեռատես Մաշտոցը հայ այբուբենը հնարեց, այդպիսով ապահովելով հայության ու հայ մշակույթի գոյությունն ու հետագա զարգացումը։

Մաշտոցի «իմաստուն, կանխատես, հանճարեղ և որդիաբար հնաղանդ», (ըստ Կորյունի) գործակից Վասակն էլ մի ուրիշ այբուբենի հիմք դրավ—հետզհետե տկարացած և հուսկ պետություններ կորցրած մի ժողովրդի ղեկավարելն բարդ ու դժվարին պայմաններում իրատեսորեն, բայց նպատակասլացորեն հետևելիք ուղղությամբ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ։ Պետությունազուրկ ժողովրդի քաղաքական այդ այբուբենը հետագայում, իրենց քաղաքական շրջապատի յուրահատուկ պայմաններում օգտագործեցին Թեոդոր Ռշտունուց սկսյալ (7-րդ դար) մինչև Եղիա Արճիշեցի և Հովհան Իմաստասեր Օձնեցի հայրապետները (8-րդ դար), մինչև Սմբատ Օրբելյան իմաստուն, շինարար և լեզվագետ իշխաններ (13-րդ դար), և մինչև Թուրքիոյ հայոց պատրիարքները (15—20-րդ դդ.) գործակցությամբ բաղում աշխարհականների էլ (Հարություն Պեղճյան և Տեղեկագիր 1—5

այլն), և կարողացան որքան հնարավոր էր, հայ հասարակական կենցաղի մի ներքին կացութաձև ապահովել արդեն Եվրոպայում էլ հաստատ ոտք դրած Օսմանյան սուլթանների աստվածապետական իշխանության ներքև։

Պետուրենազուրկ ժողովրդի այդ իրատես, բայց նպատակասլաց հաղթականության այրուբենի հանճարեղ հիմնադիրը եղավ Վասակ Սյունին, առաջին հայ մարզպանը, «շքեղ և բարձր ի մեջ աշխարհիս Հայոց, և յոյժ մեծարգոյ և գովելի ի դրան արքունիս։ Որքան հայօգուտ և օրհնաբեր կլիներ Իրանի հովանու տակ իր հաստատելիք Սյունի գահատոհմի մաշտոցյան նպատակասլաց ավանդությամբ վարվելիք վարչությունը...։ Բայց նրան ձախողեցին անիրատես ամբոխավարական դահավիժի միջոցներով, և զրկեցին հայությունը մաշտոցյան նպատակասլացության բերելիք բաղում խոշոր բարիքներից ամբողջ մի սերնդի կյանքում՝ Ավարայրից մինչև Նվարսակ (Վահան Մամիկոնյան), թեև այդ զրկանքը երբեմն էլ լիովին չդարմանվեց։

Ժամանակն է,— և միթե չափազանց ուշ չէ՞ արդեն,— որ իրատեսորեն թոթափենք պատմական ճշմարտությունը 5-րդ դարու անհնատես ու գահավիժիչ ամբոխավարության հերյուրած զրպարտանքներից, և արդարություն անենք կարեկցելի և գովելի, բայց իրեն պաշտպանելու անկարող նահատակյալ Մեծ Զոհին, 5-րդ դարու հանճարեղ մաշտոցյան բաղաքական Մեծ Դեմքին, պետութենազուրկ ժողովրդի քաղաքական այրուբենը հնարող, բայց 15 դարեր անպարտորեն դատափետված Մեծ Սյունեցուն։

Պատմական արդարություն անենք՝ թե՛ ողջությանն ու թե՛ մահից հետո զրպարտված անխոսուկ մեռյալին՝ Մեծ Անիրավյալին, ի սեր պատմական ճշմարտության, և ի դատափետումն ժողովրդավնաս, աղետաբեր ու զրպարտիչ ամբոխավարության։ Հերիք չէ՞ ինչքան եղիշեի գիրքն հարվածեց հայ ժողովրդի իրատես ողջամտությունը ամբողջ 15 դար...։

Մաշտոցի ադամանդյա անվան կողքին միշտ էլ արժանի է շողշողալու իրեն սերտ գործակից Սյունեցու պողպատակուռ, անպարտորեն զրպարտված, եղերաբախտ անունը։

Եվ ո՞ր ուղղամիտ ու ռեալիստ հայը և գիտնականը չեն հրճվի, որ Մաշտոցին որդիաբար հնազանդ, և նրա գործը 40 տարի ամրապնդովի հովանավորողը՝ իմաստուն, նախատեսող Վասակ Սյունին, մարզպանի պաշտոնը պարսիկ ձեռքից հայի ձեռքին առաջին փոխանցողը, և արյունախույս ու ցվերջ մաշտոցյան մնացող վարչագետ Մեծ Սյունեցին իրականում դավաճան ոչ մատնիչ չի եղել։

Х. Б. Вемян

К ИСТОРИЧЕСКОЙ ОЦЕНКЕ ВАСАКА СЮНИ

Резюме

Начиная с 387 года (н. э.) государственность Армении переносила тяжелые удары— разделение Армении между Византией и Персией, и лишение престола армянской династии Аршакуни в Армении, принадлежащей Персии, 428 г. Это нашло противодействие в области культуры—Месроп Маштоц создал армянский алфавит, что привело к возникновению армянской литературы и школ, в которых велось преподавание на армянском языке, 405 г. Административно Месропу помог также Васак Сюни, первый старший нахарар (феодал), занимающийся культурной деятельностью. Он стал тем первым армянским марзпаном, т. е. правителем области, (после первого персидского марзпана), при котором, однако, в середине V века, Ктезифон попробовал нанести новый удар — сделать армян огнепоклонниками; (зять Васака, убежав в Иран, отступился от веры и убедил Великого Везира Мирнерсе, что это возможно).

В статье, кроме упоминания многочисленных полезных дел Васака, отмечается, что готовый к восстанию против приказа отступничества от веры, марзпан Васак, отказался от этой мысли, так как византийский царь отказал в помощи армянам. Но привел такие убедительные факты (например, Зороастром разрушение страны считалось грехом и т. д.), и создал такую обстановку, что Ктезифон был вынужден аннулировать прежний приказ, и даже простить убийство магов. Этому поверило 90% армянского

духовенства, подавляющее большинство армянских нахараров и даже византийские епископы. Не поверило только меньшинство, и восстало, несмотря на убедительные уговоры марзпана, что нет больше причин и необходимости в восстании. Два автора века— Лазар Парпеци и в особенности страстный Егише пристрастно считают предательством отказ Васака от участия в восстании. И эта клевета повторялась из века в век, и даже в наши дни некоторыми историками.

После упоминания историков, считающих деятельность Васака положительной (А. Гарагашяна, проф. Н. Адонца, Ранд Армена, акад. Ст. Малхасянца), автор статьи, пропуская строки выражающие отношение к Васаку, основывается только на рассказанных ими фактах, (поскольку до нас не дошла история Сюникской области V века, написанная нейтральным либо сюникским историографом), которые часто являются невольными признаниями в пользу Васака. В статье отмечается, что подавляющее большинство исследователей книгу Егише считает религиозной эпопеей, менее достоверной чем книга Парпеци, отредактированной и измененной. Она уже впервые была упомянута Товма Арцруни (IX—X вв.).

В статье приведена $^1/_4$ многочисленных противоречий книги Егише, и отмечаются трагические последствия восстания, непосредственные и будущие. Из упомянутых Егише 66 000 армянских воинов погибли 285, т. е. из 1000 приблизительно только 6. Побежденные, сдав свои семьи и имущество новому персидскому марзпану были отправлены в Персию, где во время суда обвинили Васака в противоперсидской деятельности. Хотя Васак был лишен всех должностей и права вернуться в Армению, но и восставшие были жестоко казнены. Однако через 10 лет Великий Везир с сожалением признался, что причиной разрухи Армении является он сам (понятно, подстрекаемый зятем Васака).

В статье указано, что психологически было невозможно, чтобы Васак стал «отступником, изменником, предателем», так как долгие годы был сподвижником и покровителем деятельности Месропа, был уже в возрасте более 60 лет, и всеми мерами боролся чтобы первенство не досталось зятю — отступнику.

Автор статьи отмечает 2 больших результата деятельности Васака для потомков— линия политики возможной самостоятельности народа лишенного государственности, и тысячелетняя просветительская и организаторская деятельность сюникской школы, основанной Месропом, которой он покровительствовал 40 лет.